

11486

338.1

11-50

1913

Վ 167

2001

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

400

և

ՏԱՌԵՐԻ ԳԻՆԻ

1500

աճեայ

յՕԲԵՆԵԱՆԻ

յԻՆԱՏԱԿԻՆ

№ 7

Գրատ. Բ. Ա. Բուդուղեանի.

ՊԵՏԻ Է

ՀԵՏԵՒԵԼ



338.1
Պ-50

2010

№ 154.
Հիմնական - հարցազետի խոշորագույնը.

№ 7 ՀԲՏ. ԲԺ. Ը. ԲՈՒԳՈՒՂԵՆՆԻ № 7

338.1
7-50

ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ
անդրանիկ ներ
ՏՈՑՐԱՆՆԱԳԱՐՇՈՆՆԻՑ
13 ՆՈՅՄ. 1918 թ., ԹԻՖԼԻՍ.

ՊԵՏԺԷ

ՀԵՏԵՒԵԼ

(Փոխադրութիւն Ե. Ս.)

1. Ճանապարհորդը.—2. Պայծառացող խոհեր.—3. Անհաղը.—4. Արհեստները և հողագործութիւնը.—
5. Արտերի հիմքը.—6. Նոր գիւղը.—7. Դաղթահա-
նութիւնը սպանում է.—8. Նոր տնտեսութիւնը.—
9. Բանջարեղութիւն և պարտիզանութիւն.—
10. Բնակարաններ.—11. Փոխադրութիւն.—12. Հար-
բեցումներ.—13. Հրաշագործ ոյժերը և վաճառի նա-
մակը:



Տպարան «Հերմէս», Գրաֆսկայա փող. № 6.

1913



46751-տն

155
39



I

Ճանապարհորդը.

— Դէհ; տանտէր, ինչքան պէտք է վճարեմ գիշերելու և ընթրիքի համար:

— Այդ ինչ է նշանակում: Ոչինչ հարկաւոր չէ: Մենք մեծ ճանապարհի վրայ չենք ապրում, մեր եկող-գնացողը քիչ է: Էս քանի տարի էր մարդու երես չէինք տեսել մինչև քո գալը. շատ շնորհակալ եմ քեզանից, հօ քեզանով չենք հարստանալու... բացի զրանից էսօր էլ հասարակ օր չէ, Ծնունդն է... չէ՞ որ մենք էլ քրիստոնեայ ենք: Բայց ինչո՞ւ ես այսպէս շուտ գնում. գեռ աքաղաղը մի բերան է խօսել: Լաւ է, մի քիչ սպասէիր, գուցէ սայլ է պատահում, մինչև գիւղը գոնէ ոտքով չէիր գնալ...

Սպասելն անօգուտ է. գուցէ և սայլ չպատահի, իսկ մինչև գիւղը 15 վերստ ճանապարհ

է: Նա ուզում եմ շուտ տեղ հասնել. բայց տես-
նենք ճանապարհը կ'գտնեմ:

— Մի ճանապարհ է, երթեկողներն էլ ե-
րեւի բաւականին տրորած կլինեն ձիւնը. քամի
էլ չի արել, ճանապարհը նոր ձիւնով լցւած չի
լինի. գիշերն էլ բաւականին լուսնայէ ու խա-
ղաղ... ճանապարհը հեշտութեամբ կ'ջոկես:

— Շատ շնորհակալ եմ, տանտէր, հիւրա-
սիրութեանդ և սիրալիր ընդունելութեան համար:

— Բարի ճանապարհ. Աստուած քեզ հետ:
Նւ տանտէրը հիւրին ճրագով ճանապարհ դը-
րեց մինչև բակի դուռը:

Ճանապարհորդը ձիւնը ճռճռացնելով անյայ-
տացաւ փողոցի միւս ծայրում: Մի կողմից լու-
սինն էր իր փայլով երկիրը լուսաւորում, միւս
կողմից աստղերն էին պլպլում երկնակամարի
վրայ: Մառնամանիք էր: Ձիւնապատ դաշտը
փայլելում էր կանաչ-կարմիր կրակի ճաճանչ-
ներով: Ճանապարհի շուրջը պատահող ծառերը
ծածկւած էին ձիւնի բիւրեղանման փոշիով:

Ճանապարհորդը յիշեց իր անցեալից նման
մի դէպք, երբ իր մօր հետ վաղ առաւօտեան
եկեղեցի էր գնում: Այդ օրից անցել էր 40 տարի:
Ամեն ինչ փոխել էր: Մայրը վաղուց էր մեռել:

Նա սովորելով գիւղական, ապա քաղաքային
դպրոցներում, բոլորովին կտրւել էր գիւղից և
գիւղացիութիւնից: Այդ ժամանակամիջոցում նա
եղել էր զանազան քաղաքներում ու գործարան-
ներում և վերջին ժամանակներս միայն բախտը

նրան գիւղի ճամբան բռնել տւեց: Կեանքը նը-
րան շատ էր խաղացրել: Նա ապրել էր թէ հա-
րուստ, թէ միջակ և թէ բոլորովին աղքատ: Նա
երբեմն ծառայում էր ուրիշներին, երբեմն ու-
րիշներն էին իրան ծառայում, երբեմն էլ մնում
էր անգործ: Կեանքը նրան մէկ երես էր տալիս,
մէկ էլ նեղում, ճնշում էր: Մի ժամանակ նա
փողը շաղ էր տալիս. իսկ մի ուրիշ ժամանակ
ոչ գիշերելու տեղ ունէր, ոչ ուտելու հաց: Պա-
տահում էր, որ բարեգործութիւն էր անում ու-
րիշներին, պատահում էլ էր, երբ ինքն էր բարե-
գործութիւնից օգտւում: Վերջ ի վերջոյ նիւթա-
պէս և ֆիզիքապէս ուժասպառ եղաւ նա և ցան-
կացաւ հայրենի երկիրը տեսնել:

Քաղցր յիշողութիւնների մէջ խորասուզւած,
ճամբորդը չ'նկատեց, թէ ինչպէս թեթեւ բամին
բուրի փոխւեց: Երկինքը մթնեց, աստղերը ծած-
կւեցին ամպերի տակ և շուրջը պատեց անթա-
փանց խաւար: Ձիւնապատ դաշտը ալեկոծւում
ու փոթորկւում էր: Չորս կողմը երևում էր միայն
սպիտակ տարածութիւն: Ճանապարհը կարծես թէ
խուսափում էր ճամբորդի ոտի տակից: Նա մին-
չև ծնկները խրւում էր ձեան մէջ: Ձիւնը ամեն
կողմից թափւում էր վրան, ծեծում նրա թի-
կունքը, կուրծքը և այրում երեսը: Տուրտը թա-
փանցում էր նրա մարմնի ներսը և սարսուցնում
նրան:

«Ձիւնի՛ թէ ճանապարհը կորցրել եմ, խօսեց
ինքն իրան. բայց որպէսզի ճամբից դուրս չգամ,

միշտ դէպի առաջ կ'գնամ և գուցէ հասնեմ որևէ գիւղի. պէտք է որ մօտակայքում ինձ ծանօթ մի գիւղ լինի»:

Քամին բանի գնում ուժեղանում էր. ճամբորդի մէջքը սկսեց փետանալ, ոտքերը դողդողում և ծալւում էին, շունչը կտրւում էր և սաստիկ ցրտից աչքերից քամուղ արցունքները խառնւում էին ձեան հետ ու սառչում բեխերի ու մօրուքի վրայ:

«Արդեօք մեռնելու համար բախտը ինձ այստեղ բերեց»... մտածեց ճամբորդը և թուլացած ընկաւ մի բլրակի լանջին. «էստեղ մի փոքր հանգստանամ. երևի գիւղը մօտ է»:

Ճամբորդին այս պառկած տեղը և տաք, և հանգիստ թւաց, շուտով նոյնիսկ բաւական լաւ կարծես թէ բոլորովին չէր յոգնել: Նրա մտքերը դառնում էին գիւղի, իւր մօր և երեխայութեան շուրջը... Քամին կարծես թէ հանգստացաւ և ցուրտը մեղմացաւ:

Բայց ահա լսւում է ինչ-որ սահնակի զանգի ձայն:

— Հրռռ... էդ ո՞վ է, կանչում է մէկը:

Ճամբորդին թւում է, որ նա պատասխանեց, որ նա նստեց սահնակը և գիւղ է գնում: Սահնակի մէջ տաք է, փափուկ է և լաւ...

— Վեր վաց. խոտի տակ տաք է, չէ՛, ասաց գիւղացին և ցնցեց սահնակում խոտերի մէջ թաղւած ճամբորդին:

— Ի՛նչ, միթէ հասել ենք:

— Ինչպէս չէ... Ժամուկէս է գալիս ենք, գեռ չ'հասնե՛նք. ուրեմն դու քնած ես եղել, որ էնքան ճանապարհը չես նկատել: Վերկաց. լսո՞ւ ես, արդէն պատարագի զանգերը տալիս են: Ճամբորդը ականջ դրաւ. ղօղանջում էր նոյն զանգը, որը և հնչում էր նրա երեխայութեան օրերին: Զանգահարութիւնը հնչիւն էր, արագ և տօնական:

Ճամբորդը սթափւեց, վեր կացաւ և իրեն բերող գիւղացու օգնութեամբ սահնակից ցած իջաւ:

— Բայց դու գլորւում ես. ինչպէս երևում է լաւ փետացել ես...

Այստեղ միայն ճամբորդը յիշեց, թէ ինչպէս ինքը դաշտում, բլրի մօտ նստեց, մնացածը չէր յիշում, ուստի հարցրեց.

— Էս ինչպէս ես այստեղ հասայ:

— Ա՛յ քեզ բան. ինչպէս երևում է քնած ես եղել: Ես քեզ գտայ բլրի մօտ, հարց ու փորձ արի, իսկ դու ինչ-որ բան փնթփնթացիր: Տեսայ որ սառչելու վրայ ես, թեիցդ բռնած սահնակի մէջ գրի, պառկեցրի և խոտով ծածկեցի. ու այդպիսով դու այստեղ հասար:

— Կարծիս քիչ-քիչ յիշում եմ, ասաց ճամբորդը:

— Է՛, հիմա, պատարագին գալու ես, թէ չէ: Լաւ կլինի տիրացուի սենեակը դնաս, մի քիչ տաքանաս:

Գիւղացին տեսնելով ճամբորդի թուլութիւ-

նը, թեկիցը բռնած տարաւ առնն: Քիչ յետոյ ճամբորդը փոքր ինչ կազդուրւեց և իւր ազատարարի հետ եկեղեցի գնաց:

II

Պայծառացող խոհեք.

Նրանք մտան եկեղեցի և կանգնեցին դռան մօտ: Ճամբորդը դեռևս լաւ չէր կազդուրւել: Նա իրեն թոյլ էր զգում և խնդրում էր Աստծուն՝ ներել իր յանցանքները, իր սիրտը մաքրել եսասիրութիւնից ու չարութիւնից, մտքերը մաքրել առօրեայ հոգսերից, բոլոր զգացմունքները դարձնել դէպի բարին, ամբացնել կամքը և լուսաւորել միտքը:

Ծանօթ երգեցողութեան ազդեցութեան տակ ճամբորդի այեծովի հոգին լցւում էր խաղաղութեամբ և անդորրութեամբ: Նրա ոյժերը կըրկնապատկւում էին, հոգին պայծառանում էր և շրջապատող մարդիկ աւելի հարազատ էին թըւում: Նա հաւատում էր նոր կեանքի, նոր սիրոյ բոլորի մէջ և ուզում էր աշխատել բոլորի համար—թէ հարազատների և թէ օտարների:

Քահանայի «խաղաղութիւն ամենեցուն»-ի հետ ժողովուրդը գրոհ տւեց դէպի դռները: Բոլորը շտապում էին ճաշակւել և դիմաւորել թաթախումը իւրայինների հետ միասին:

III

Ծ ա ն օ թ ն ե ր ը .

Օտարականը դիտում էր գիւղացիներին, աշխատելով ծանօթներ գտնել նրանց մէջ, բայց ոչ մէկին չէր ճանաչում:

— Ասես թէ բոլորովին ուշքի եկար: Ծնորհաւոր Ծնունդ, մօտենալով նրան ասաց ազատող գիւղացին:

— Շատ շնորհակալ եմ, ձեր Ծնունդն էլ շնորհաւոր լինի: Քեզ Աստած ինձ օգնութեան ուղարկեց, եթէ ոչ ես սառած կլինէի: Յաւիտեանս չեմ մոռանալ քեզ. բայց մի ասա, ա-նունդ ինչ է:

— Գէւոյենց Մկրտիչ եմ ասում, երբեմն էլ Գէորգեան եմ կանչում:

— Դու Մուկուչն ես. ուրեմն մենք միասին դպրոցում սովորել ենք և ընկերներ եղել, ուրախ բացականչեց ճամբորդը:

— Այ քեզ հրաշք. ախպէր, դու այստեղացի չես. ես այստեղացիներին բոլորին ճանաչում եմ: Ախար դու ո՞վ ես:

— Ես Վահան Զաքարեանն եմ, իսկ դըպրոցում ինձ Զաքիենց Վահօ էին կանչում:

— Ճիշտ որ, Վահօ ջան: Այ դեռ թշիղ վրայի սպին էլ երևում է, որ ստացար իմ պատճառով Դրիգոր Աւետիսեանի հետ կռուելիս: Այ,

հրէս հենց ինքն էլ. Գրիգոր, արի՛ այստեղ: Տես է, մեր Վահան Զաքարեանն է, յիշում ես:

— Տօ էս դժւ ես, Վահան. էս 40 տարի է մեր կողմերում չէիր եղել: Լսեցինք, որ դու տւտուցիչ ես, յետոյ, ասացին, մեծ գործի ես մտեցի...

— Այո, մեծ գործի էլ եմ մտել... պատասխանեց Վահանը:

— Յետոյ, ասում էին, սկսել ես կոնծաբանել, ծառայութիւնից յետ ես մնացել, և մեռել ես թէ կորել—էլ դրանից յետոյ քո մասին լուր չ'առաջացանք:

— Այո, շատ բան անցաւ գլխովս... Հենց այսօր քիչ մնաց ճանապարհին մեռնելի. այ, Գէոյենց Մկրտիչը ազատեց...

— Բա, ազատեցի:—Սահնակով գալիս եմ, մէկ էլ տեսնեմ մի մարդ ուժասպառ ընկած է լլրի վրայ, կարծես թէ իր հօր տանն է. Հագիւ հասող քաշեցի, սահնակը բցեցի: Ահա բոլորը: Դէ ես չ'անէի, մէկ ուրիշը այդ բանը կ'անէր: Հիմի տեսա՞ տեսնենք, դու հըր ես գնալու: Ձեր գիւղում այժմ ձերոնցից ոչ ոք չկայ. գնանք ինձ մօտ, միասին կճաշակենք: Այսօր հենց մենակ էլ եկել եմ. մինչև մեր գիւղը ութը վերստ ճանապարհ է:

Վահան Զաքարեանը թէև դանդաղում էր, բայց Մկրտիչը քաշեց նրա թևից և տարաւ իրենց գլխովը:

IV

Ա Ն Ո Ւ Ղ Ր.

Վահան Զաքարեանը երեք օր ապրեց Մկրտիչ մօտ. այդ միջոցին նա բոլոր գիւղացիներին հիւր եղաւ: Չորրորդ օրը գնաց իւր հայրենի գիւղը: Գիւղը և շրջակայքը խիստ փոխւել էին. գիւղը տասը տանից դարձել էր երեսուն տուն: Հարգատ խրճիթի և բակի հետքն անգամ չկար: Վահանի մանկութեան ժամանակայ ծերերը համարեա թէ բոլորը մեռել էին: Այժմ կային կամ նրա հասակակիցները, կամ նրանց որդիները, որոնք Վահան Զաքարեանի մասին իսկի չէին էլ լսել:

Վահանը գտաւ երկու ազգականների և պատուարւեց նրանց մօտ:

Միւս օրը նա գիւղական ժողովում իրեն յայտարարեց համագիւղացի, ներկայացրեց իր փապտաթղթերը և խնդրեց, որ իրեն հող տան՝ երկրագործութեամբ պարապելու համար:

Ժողովում սաստիկ աղմուկ բարձրացաւ:

— Մի՛թէ դու մեր գիւղացի ես: 40 տարի է այստեղ չես եղել, կեանքումդ մեզ հետ հարկ չես վճարել, մեր գիւղացիական ոչ մի կարիքին չես մասնակցել: Կարծես թէ երկնքից վեր ընկար: Ինչի՞ համար պէտք է տան տեղ, վարելահող, խոտհարք և այլն տանք քեզ, ասաց ամբոխի միջից մէկը:

— Տօ, որ քեզ հող էլ տանք, դու ոչ վա-
րելու ես, ոչ էլ ցանելու: Դու իսկի հողագործի
նման չես, այլ թափառականի: Հողը պիտի ու-
րիշին տաս ցանելու: Իսկ մեր հողը հենց մեզ
շատ անհրաժեշտ է, ասաց մի երկրորդը:

— Արդեօք դու մեր գիւղացի՞ ես. գուցէ
ինքնակոշի մէկն ես, կասկած յայտնեց գիւղա-
ցիներէից մի ուրիշը:

— Ոչ, եղբայրներ. մեղք մի անէք, — նա
ինքնակոշի չէ: Նա իսկապէս Զաքարեաններից է,
պատասխանեց մի ծեր գիւղացի:

— Ես դրան յիշում եմ. բայց յիշում եմ և այն,
որ նա գիւղական վարչութիւնից գրաւոր ազատ-
ման համախօսական ուղեց: Համախօսականը
մենք տւեցինք: Ուրեմն, հիմա նա մեր գիւղա-
ցին չէ:

— Որ մեր գիւղացին չէ, ուրեմն հող էլ
չի ստանայ: Ես չորս շունչ եմ, բայց մէկ ու կէս
շնչի հող ունեմ, ասաց մի գիւղացի:

— Ի՞նչ էք երկարացնում. մեր վարելահողե-
րը, խոտահարքները շատ քիչ են. քիչ է մնում,
որ մենք էլ ուրիշ տեղ գաղթենք, այլ ոչ թէ
թափառաշրջիկներին էլ դեռ հող տանք:

Դիւղացիները այսպէս վերաբերեցին վա-
հան Զաքարեանի խնդրին: Վահանը օգտւելով
տիրող լուծթիւնից, ասաց.

— Օրէնքով ես ձեր համագիւղացին եմ.
ինչպէս ձեր գիւղացի՞ ես խնդրեցի ինձ էլ հող
տաք. բայց դուք ինձ չէք տալիս: Թող ձեր ա-

նածը լինի. չեմ վիճում և դատաբանով չեմ պա-
հանջի: Իսկ հողը խնդրեցի, որովհետեւ ցանկա-
նում էի ապրել երկրագործութեամբ, հողով,
աշխատանքով. բայց տեսնում եմ, որ չի կա-
րելի...

— Հենց եղպէս էլ լաւ է. ուրիշ ըլի գըլխ-
ներիցս... լսեց ամբօխի միջից մի բարկացկոտ
ձայն:

— Խնդրում եմ չբարկանաք: Ներեցէք, որ
ձեզ անհանգստացրի: Բաժանւենք միմեանցից
խաղաղութեամբ, ասաց տխրութեամբ Վահանը
և մնաք բարի ասելով հասարակութեանը, զնաց
իր ազգականի մօտ:

Փողովը վերջանալուց յետոյ մի ծերունի
եկաւ Վահանի մօտ և գիւղացիների հող չտալը
այսպէս բացատրեց.

— Մեր գիւղի հողը լաւն է. լաւ ապրել
կարելի է: Բոլորն էլ հողը թանգ են գնահատում
ու ամեն մէկը ուզում է աւելի ունենալ: Հողա-
բաժնութեան ժամանակ ամեն մի կտորի վրայ
գլուխ են պատռում: Դու, Վահան, մեր գիւղում
երբէք հող ստանալ չես կարող: Աւելի լաւ է,
փորձիր ուրիշ հասարակութիւնների մէջ ստանալ,
քան մեզնում: Հենց մեր գաւառում կան այն-
պիսի գիւղեր ուր հողատէրերը հողից բեզար են,
որովհետեւ չեն կարողանում, ինչպէս պէտք է
օգտւել նրանից, չունենալով հարկաւոր ծանօթու-
թիւն: Այդպիսի տեղերում էժան գնով, գուցէ և
ձրի հող տան քեզ:

— Ինչո՞ւ է այդպէս. որտեղ են հողը թանգ գնահատում և որտեղ նրանից ազատւել ուզում:

— Այնտեղ, որտեղ հողը առատ է և արդիւնաւէտ, նա աւելի թանգ է. իսկ որտեղ նա վատ է և արօտատեղերը պակաս են, այն տեղերից փախչում են: Այդպիսի տեղերում ծայրը ծայրին հասցնել չեն կարողանում. կամ անասունների համար են խոտ գնում և կամ հացի պակասը, որովհետեւ նրանք չգիտեն խոտաբուծութեամբ պարապել կամ հողը պարարտացնել:

Այս բոլորից յետոյ Վահան Զաքարեանը վերադարձաւ Մկրտչի մօտ, խոստանալով ազգակա-նին, որ էլի կհանդիպի նրան:

V

Արհեստներ եւ հողագործութիւնը.

Դառնացած սրտով Վահանը վերադարձաւ Մկրտչի մօտ:

— Հը՛, չլինի՞ թէ բանդ բուրդ է,—հարցրեց Մկրտիչը:

— Այո, չյաջողեց. ինձ վիճակած չէ իմ հարազատ գիւղում տուն ու տեղ կազմել: Մեր գիւղացիները նոյն իսկ բարկացան, որ ես իրենց վզին եմ փաթաթւում:

— Այդ շատ հասկանալի է. ամեն մարդ իր բանը լաւ գիտի: Նրանք հողը մշակել են, մաքրել և գնովը մէկ ծախս դրել վրան. իսկ դու հեռուից

վեր ես կացել եկել, թէ ինձ էլ հող աւէք. էհ, նրանք էլ ճամբէդ լաւ են քարել: Ախր ինչի համար ես ուզում հողագործութիւն անել. հողագործի աշխատանքը շատ ծանր է: Ամառը մենք առաւօտեան ծէգի հետ վեր ենք կենում, արևը մայր մտնելուց յետոյ միայն տուն դառնում, և ամբողջ օրը էնքան ենք աշխատում, որ մէջք-ներս ջարդւում, քրտնախաշ ենք լինում: Ոյժ է հարկաւոր, որ սրան դիմանայ. պէտք է մի քիչ էլ սովորած լինես այդ աշխատանքին: Հեռուից նայողի համար վար անելը շատ հեշտ է թւում, բայց եթէ մաճը իրան տաս, մի ալօս էլ չի կարող վարել. պէտք է դէս ու դէն քցի, տաւարը քրտնքի մէջ տրաքացնի, արօրը մէկ պէտք է խորը թաղւի, մէկ էլ հողի երեսից քաշ տայ: Ցանելու, հնձելու, խոտ հարելու և նոյնիսկ խուրձ կապելու համար էլ շնորհք է հարկաւոր: Ձէ, ախպէր, խամ մարդու բան չէ: Դու նոր հողագործութիւն անողը չես. դու աւելի լաւ կանէիր կամ վարժապետութիւն անէիր, կամ թէ չէ, քո գրչով ապրէիր: Այ, մեր գիւղի վարժապետի տեղը խնդրիր, կամ գրագրի օգնական դառ: Ես լսել եմ, որ նրան օգնական է պէտք:

— Ձէ, Մկրտիչ, էլ չեմ ուզում գրչով զուլիս պահել և չեմ էլ անի: Ես ուզում եմ՝ թէ-կուզ աղքատ, բայց անպատճառ իմ ճակատի բրտինքով ապրել: Դու իզուր ես կարծում, թէ ես սովոր չեմ հողագործութեան: Ես քաղաքի



ուսուցանարանում սովորել եմ, թէ ինչպէս պէտք է վարել, ցանել, հնձել և կալսել: Բացի դրանից թափառական ժամանակս շատ պարապմունքներ եմ ունեցել: Վերջին երկու տարին հողագործութեամբ էլ եմ պարապել և այդ աշխատանքը բոլորից շատ եմ սիրել: Է՛հ, ինչ արած... Բայց ասա տեսնենք, ձեր գիւղում նորոգելու, կարկատանի գործ չի լինիլ:

— Ի՞նչ նորոգելու, — քմծիծաղով հարցրեց Մկրտիչը:

— Ինչ էլ որ լինի: Ես կարող եմ նորոգել՝ սայլեր, սահնակներ, երկրագործական գանազան գործիքներ, փայտեայ և պղնձեայ ամանեղէն, կահկարասիք, ոտնամաններ և այլն: Կարող եմ նոր հնձող մեքենաներ, մանգաղ, գերանդի շինել, չուխայ, քուրք և ոտնամաններ կարել:

— Դէ, ասա լաւ ուստայ ես, էլի: Բայց էգ բոլորը հրտեղ սովորեցիր, — հարցրեց նա զարմացած:

— Դուլգարութիւնն ու դարբնութիւնը դրարոցումն եմ սովորել, իսկ մնացած բաները — հաշտատ մարդկանց կալածքներում ծառայելու ժամանակ: Մի քանի բան էլ գործարաններում, գաւոզներում եմ սովորել:

VI

Թափառական կեանք.

Մոսկովսկեց գիւղում նորոգելու շատ բան ձարւեց: Վահան Զաքարեանը այստեղ մօտ մի

շաբաթ աշխատեց: Ապա նա գնաց հարեան գիւղը. ամեն տեղ էլ աշխատանք գտնուում էր: Նամի տեղ մաշիկներ և կօշիկներ էր կարկատում, մի ուրիշ տեղ սայլեր և արօրներ շինում, երրորդ տեղ չուխայ ու քուրք էր կարում, չորրորդում գութան էր կապում և ցորեն քամող մեքենաներ նորոգում, հինգերորդում անիւներ նորոգում, և այլն, և այլն: Երբեմն լուսամուտի ապակիներ էր բցում, շրջանակները փոխում: Շաբաթներով մնում էր դարբինների մօտ և մետաղը լաւ եռ տալ սովորեցնում սրանց, պայտառներին պայտելու աւելի լաւ ձևն էր ցոյց տալիս:

Նա օգուտ էր տալիս նաև շրադացականներին, սովորեցնելով սրանց, թէ ինչպէս պէտք է անեն, որ աւելի շատ հատիկներ աղան: Մի խօսքով, վահան Զաքարեանը հազար-փեշայ էր: Նա ոգելից խմիչքներ բոլորովին չէր գործածում և իրեն պահում էր շատ համեստ: Գործը բարեխղճութեամբ էր կատարում և չափաւոր վարձ պահանջում: Յատկապէս չէր զբաղւում խորհուրդներ տալ և նրա խորհուրդները դուրս էին գալիս ճիշտ կատարող և հեշտ: Մարդը շատ բան գիտէր. նա բժշկութիւն էլ գիտէր: Թեթեւ հիւանդութիւնները նա բժշկում էր յարմար սրնունդով, քրտնացնելով և շփումներով (մասսաժ): Իսկ ծանր հիւանդներին ուղարկում էր բժշկի մօտ, և իրաւամբ զայրանում էր, երբ ամեն տեսակ հիւանդից էլ արիւն էին թողնում:

Յաճախ Վահանի հետ խորհրդակցում էին դատական հարցերի մասին: Այդ տեսակ գործերը նա լաւ էր հասկանում: Կոիւնների ժամանակ յաճախ կուռղներին հաշտեցնում էր: Ճնշածներին համար խնդիրք ու բողոք էր գրում: Աւելի բարդ, հողային հարցեր ծագած դէպքերում ուղարկում էր մերձակայ քաղաքը լաւ փաստաբանների մօտ:

Ամեն տեղ, ուր որ գիշերէր Վահան Զաքարեանը, համարեա թէ գիւղի մեծ մասը կը հաւաքւէր երեկոյեան նրա պատմութիւնները և կամ ընթերցանութիւնը լսելու: Վահանը հետը ման էր ածում մի տասը-քսան լաւ խրատական գրքոյկներ և կարդում գիւղացիների ներկայութեամբ:

Մի ամսւայ մէջ Վահան Զաքարեանին ամբողջ գաւառը արդէն ճանաչում էր. բոլոր գիւղերում սիրւած հիւր էր համարւում և լաւ ընդունելութիւն գտնում:

— Բա ի՞նչպէս է, որ չես ձանձրանում առանց սեպհական անկիւնի, մի օր էստեղ, մի օր էնտեղ ապրելուց—հարցնում էին նրան կանայք:

— Հա, մի քիչ դժւար է,—պատասխանում էր Վահանը,—բայց էնքան էլ վատ չէ. որովհետեւ ամեն տեղ էլ ընդունելութիւն ունիմ, իմ սեպհական տանից լաւ տներ, երեխաներ, որոնց որքան չլինի մի լաւ բան սովորեցնում եմ:

— Համա ձեռքդ ոսկի է կտրում, հա. ամեն բան գիտես և ամեն տեղ էլ աշխատանք գտնում ես: Դու որտեղ էլ ըլնես, գլուխդ կպահես...

բայց էլի էն ես, չես հարստանում,—ասում էին ուրիշները:

— Բայց հօ աղբատ էլ չեմ,—ասում էր Վահանը.—ախր հարստութիւն էլ կայ հարստութիւն էլ: Վաճառականը փողով ու ապրանքով է հարուստ, երկրագործը՝ հողով, հացով և անասուններով, իսկ իմ հարստութիւնն էլ երկու ձեռքս ու գլուխս են: Իմ հարստութիւնը մեծ չէ, բայց ուրիշներիցը լաւ է, քանի որ ճանապարհին չեմ քցի կորցնի, ոչ էլ գողը կ'գողանայ, ոչ հողի մէջ կ'փթի, ոչ ջրում կ'խեղդւի և ոչ էլ կրակում կայրւի... Միայն թէ առողջ լինեմ:

Երբ ամառը եկաւ, Վահանը սկսեց դաշտային աշխատանքներ ևս կատարել. օրինակ՝ վարել, ցանել, հնձել, խոտ հարել, ցորենը արտից կրել և կալսել, և այլն:

VII

Արտելի հիմքը.

Վահան Զաքարեանը առաջին ձմեռը և ամառը մենակ էր աշխատանք անում: Երկրորդ ձմեռը սկսեց իրեն հետ ման ածել աշակերտներ: Մինչև ձմեռւայ վերջը նա ունեցաւ 5 աշակերտ: Եւ այսպիսով արտելի նման մի բան կազմւեց: Եթէ մի աղբատ մարդ խնդրում էր Վահանին, սա նրան իր հետ ման էր ածում, սովորեցնում և երբ վերջինս մի բան սովորում

էր, իրա աշխատանքին համապատասխան վարձ էր տալիս:

Վահանը վերցնում էր թէ մեծերի և թէ փոքրերի, բայց միմիայն աղքատ, անտուն-անտէր որբերին:

Նրան ընկերանում էին երբեմն գաւառում անուն հանած ծոյլերը, մուրացկանները, գողերը: Այս բանը շատերին զարմացնում էր և նրանք յաճախ հարցնում էին Վահան Զաքարեանին.

— Պողոսին ինչո՞ւ ես հետդ ման ածում. նա ծոյլերի մէկն է և մանկութիւնից սովորել է չաշխատել, այլ մուրալ:

— Նա ինքը խնդրեց ինձ մօտ գալ և առայժմ լաւ էլ աշխատում է: Մինչև հիմա նրա ծովութիւնը չեմ նկատել: Ես նրան վճարում եմ իր աշխատանքին համապատասխան. ծովութիւն կանի, ուրեմն և քիչ կստանայ:

— Թէոսին որ բոլորովին ի զուր ես վերցրել. ախր նա աւագակների մէկն է: Երեք անգամ բռնւել է գողութեան մէջ: Երկու անգամին հարկանները մի լաւ դնքսել են, իսկ երրորդին—բանտ է նստել:

— Այդ մասին նա նախքան ինձ մօտ մտնելը պատմել է: Նա ուտելու բան է գողացել, որովհետեւ թէ ինքը և թէ իւրայինք քաղցած են եղել: Թէոսը գողութիւնով տուն է պահել: Իսկ այժմ, ինձ հետ աշխատելով նա միշտ կուշտ է և երբեք ոչ ինձնից, ոչ էլ ուրիշներից մի մագ անգամ չի գողանալ:

— Էն կապ կտրած Պետրոսին հօ ըսկի չըպէտք է վերցնէիր: Նրա հարազատ մայրն անգամ նրանից ձեռ է վերցրել:

— Պետրոսը ոսկի է, ոսկի, տղայ չի,—պատասխանում էր Վահանը.—ամեն բան իսկոյն գլխի է ընկնում. ինչ գործ էլ լինի, մէկ-երկու օրում սովորում է. արջի նման է աշխատում: Եւ ես նրանում դեռ ևս վատ բան չեմ նկատել. միշտ էլ իր գործին է: Տեսնում է՝ գործ կայ, էլ խօսեցնել չի տալիս, անում է:

— Ախպէր, բանից դուրս է գալիս, բոլորն էլ լաւ են. դու կախարդական գաւազանով հօ չե՞ս ուղղում դրանց:

— Դրա համար ոչ մի կախարդութիւն հարկաւոր չէ. միայն թէ ես հաւատում եմ իմ ընկերներին և նրանք էլ ինձ են հաւատում ու երբեք չեն խաբում: Իսկ նրանց փոխելուն դուք էք նպաստել, դուք էք պատճառ եղել և ոչ ես:

— Ի՞նչպէս, ի՞նչ ձևով:

— Ահա թէ ինչպէս: Ես հօ նրանց չեմ կանչել, նրանք են եկել ինձ մօտ. «մենք նրա համար ենք եկել քո մօտ, որովհետեւ բոլորն էլ քո մասին միայն և միմիայն լաւ են խօսում»: Դուք իմ մասին լաւ բան էք խօսել, ուրեմն և դուք էք նրանց դէպի ինձ ուղարկել, հաւատացնելով, որ ես բարի մարդ եմ: Իսկ իմ բարութեանը հաւատալով, հաւանական է, նրանք էլ ցանկացել են բարի լինել: Իսկ երբ նրանք ազնւացան, դուք էլ նրանց լաւ վերաբերեցիր: Նրանք աշխատում

են լաւ մնալ, և ես էլ չեմ խանգարում: Ահա բոլոր պատմութիւնը:

— Շատ ձիշտ է, ամեն տեղ քո լաւն ես ասում: Վատ բանը քեզ չի էլ յարմարւի:

Վահան Զաքարեանը իր աշխատակիցներին հետ շատ լաւ էր վարւում: Նրանց սխալները ուղղելիս չէր բարկանում, կարգադրութիւնները պարզ էր անում: Ինչ որ նրանք չէին ցանկանում անել, ինքն էր անում, կարծես թէ հենց դրան էր սպասում: Վարձը ստանում էր նրանց ներկայութեամբ, մի մասը ինքը վերցնում, մնացածը նրանց աշխատանքին համապատասխան բաժանում:

Մէկ անգամ բանւորներից մէկը վարձից դժգոհեց, այն ժամանակ Վահանը իր բաժինը նրան առաջարկելով ասաց.

— Վերցրու, ինչքան որ հարկաւոր է քեզ. գուցէ ես աւելորդ եմ վերցրել:

Դժգոհողը ամաչեց ու փողին ձեռք չտւաւ. իսկ Վահանը իր դրամը սուս ու փուս գրպանը դրաւ:

VIII

Անապատահանների արտելը.

Այդ տարւայ գարնանը արտելի անդամների թիւը հասաւ 12-ի: Ընդհանուր արտելի փողով Վահանը 4 հատ եղ առաւ: Արտելը այժմ սկսեց

ամառնային ամեն տեսակ աշխատանքներ կատարել և եզները բանեցնել:

Աշխատանքների ժամանակ այդ փողերիկ ընկերութեան գլխաւորը Վահանն էր: Իսկ երբեք նրանք մասերի էին բաժանւում, Վահանը ամեն մի խմբին փորձեալ բանւորներից մի աւագ էր նշանակում:

Վահանը օրավարձով աշխատանքներ քիչ էր վերցնում. նա գերադասում էր կապալով վերցնելը, և այսպիսով արտելը պայմանաւորեց մի քանի՝ եզներ չունեցող գիւղացիների բոլոր ամառնային աշխատանքը կատարել: Նրանք վերցնում էին բանջարանոցներ փորել և տնկելը, զարնանացանն անելը, արտերը աղբելը և հողի պարարտացնելը, խոտհարքների խոտը հարել և կրելը, ցանքսերը հնձելը և այլն:

Կապալով աշխատանքները արտելին քաջաւերում էին. նրանց դուր էր գալիս, որ իրենք աշխատանքի տէր էին համարւում: Նրանք իրենց ցանկացած ժամանակ հանգստանում էին: Բայց երբ որ աշխատանքի էին կաշոււ, գործը առաջներին դողում էր. ընդհանրապէս օրավարձով աշխատողներից աւելի յաջող էին աշխատում և աւելի շատ վարձ վերցնում:

Արտելը անգործ չէր մնում, նրանցից մէկը միշտ շրջում էր և օր առաջ աշխատանք գրտնում:

Արտելի անդամները կիրակի օրերը հաւաքւում էին մի տեղ, շաբաթական հաշիւները տես-

նում և եկող շաբաթեայ համար նոր խմբերի բաժանում:

Հաշիւներն ու վարձելը այնքան էլ շատ ժամանակ չէին խլում: Տօն օրեայ մնացած մասը հանգստանում էին: Այժմ հանգստի ժամերը նըրանք բոլորովին այլ կերպ էին անցկացնում, քան առաջ: Նրանք կամ լսում էին որևէ գրքի ընթերցում, կամ Վահանի հետ զբօսնում ու պատահած առարկաների ու երևոյթների մասին զրոյց անում: Զբօսանքները և զրոյցները երբեմն արտելին աւելի հետաքրքրական էին թւում, քան գրքերը: Վահանը ամեն բան գիտէր, ամեն բան կարողանում էր բացատրել ու նրանց համար մի նոր բան ասել: Նրանք հետաքրքրութեամբ լսում էին ուրիշ առաջաւոր ժողովուրդների կեանքի և ապրուստի մասին պատմութիւններ, օգտակար գիտելիքներ խոտերի, թփերի և ծառերի մասին, նրանց տւած օգուտի, գործածութեան եղանակի և աճեցման ձևերի, չորքոտանիների, թռչունների, ձկների և զեւուռնների, սրանց կեանքի, մարդկութեանը տւած օգուտի և փնասի մասին, և այլն, և այլն:

Վահանից արտելի անդամները իմացան Քրիստոսի կեանքի և վարդապետութեան, առաքեալների և մեծ վարդապետների կեանքի մասին: Հետզհետէ նրանք սովորեցին գնահատել մարդկանց արարքները և թէ՛ միմեանց, թէ՛ շրջապատի հետ անկեղծ յարաբերութիւններ պահպանել: Տարիների ընթացքում արտելին նոր և նոր

անդամներ էին աւելանում, բայց սրանց մի մասը շուտով հեռանում էր: Հեռանում էին նրանք, որոնք կամքի թուլութեան պատճառով անընդունակ էին կազմակերպւելու խմբական աշխատանքի համար:

Ամառայ վերջին Վահանը եզներից մի զոյգը ծախեց. ապա եզների և ամառայ ընթացքում արտելի աշխատած փողով նա գնեց երկու հատ քամելու ձեռքի մեքենայ: Սրանցով նա արագութեամբ կալսեց իրենց կապալով վերցրած ցանքը և ապա երկու խմբի բաժանելով բանւորներին, ուղարկեց հարևան գիւղերը՝ ամեն մի խմբին մի մեքենայ տալով:

Զմեռը արտելը նորից երկու կամ երեք հոգուց բաղկացած խմբերի բաժանւելով՝ սկսեց շրջիլ գիւղերը և զբաղւել զանազան առարկաներ նորոգելով:

IX

Ն ո Ր - գ ի լ ղ ը .

Այս ձևով անցաւ երեք տարի: Երրորդ տարեայ ամառը ու աշնանը արտելը աշխատեց այնպէս, ինչպէս և նախկին տարիներում: Զորրորդ ձմեռայ սկզբին Վահան Զաքարեանին կանչեցին Նոր-գիւղ, զանազան իրեր նորոգելու: Նոր-գիւղը բաղկացած էր չորս տնից, որից երեքը եղբայրներ էին. սրանք երեքն էլ ունեւոր մարդիկ էին և պատրաստւում էին գաղթելու:

ՆԷ այժմ Վահանին հրաւիրել էին, որ նա ճանապարհի համար սայլեր պատրաստի, և հարկաւոր իրերը նորոգի:

— Դուք ինչո՞ւ համար էք տեղափոխուում, հարցրեց Վահանը եղբայրներին: Դուք այստեղ, եթէ չեմ սխալուում, լաւ ապրուստ, լաւ տուն ու տեղ, բաւականին անասուններ ունէք: Հողներդ առատ է և հացն էլ լաւ էր գալիս: ՆԷ ընդհանրապէս, կարծեմ որ, լաւ էիք ապրում:

— Լաւ էր, բայց ոչ այնքան,— պատասխանեց տան տէրերից մէկը: Տունը ծածկելու փայտ այստեղ շատ դժւարութեամբ էինք ձեռք բերում. գերանների և երկրագործական գործիքներ շինելու փայտի համար 60 վերստ ճանապարհ էինք գնում: Խոտհարքներ էլ բաւականաչափ չունէինք. հենց որ տարին մի քիչ չորային եղաւ, դէ արի ու դէս-դէն ընկիր, որ ձրմեռը ապրանքդ քաղցից չկոտորես, խոտ ճարես: Անցեալ տարի ամեն մէկս 50 բուբուլ խոտ գրնեցինք: Դաշտներումս էլ մի թիզ խամ տեղ չի մնացել, բոլորը տասը տարուց վեր է ինչ վարել ենք: Հողը ուժից ընկել է. առանց աղբելու և պարարտացնելու ոչինչ չես ստանայ: Իւրաքանչիւրս մեծ թուով անասուններ ենք պահում հենց այդ բանի համար, իսկ այդ այնքան էլ ձեռնառու չէ: ՆԷ որ գլխաւորն է՝ հողը սակաւ է. գուցէ և մեզ բաւականացնի, բայց մեր երեխաներին քչութիւն կանի: Բոլորս էլ, փառք Աստուծոյ, տղերք շատ ունենք. մի քիչ մեծա-

ցան, նեղութիւնից կլսեղուեն: Մենք, գլխաւորապէս, այդ պատճառով էլ գաղթում ենք:

— Բայց չէ՞ որ հողը ապագայում է քչութիւն անելու...

— Հենց բանն էլ դրանումն է, որ սակաւութիւն անպատճառ կլինի. քանի որ մենք ոյժ ունենք և հնարաւորութիւն՝ ուզում ենք տեղափոխել: Ինքդ լաւ գիտես, որ եթէ ձեռդ տաք է, նոր տեղում էլ կարող ես լաւ տեղաւորուել: Բայց Աստուած չանի, թէ աղքատ ժամանակը գաղթես. եթէ հին տեղդ վատ էր, նորը տասը անգամ աւելի վատ կլինի: Իսկ նոր տեղի հողերը, ասում են, ոսկի են. ծառեր—ինչքան ուզես և տեղն էլ ընդարձակ: Ամեն ինչ առատ է: Տեղափոխւելն էլ հօ պատիժ է:

— Բոլորդ էլ գնում էք:

— Մենք, երեք եղբայրով գնում ենք, իսկ մեր հարեանը մնում է: Նա չքաւոր է և տեղից շարժւելու ոյժ չունի: Մենք աշնանացան էլ չենք արել, որովհետեւ գարնանը գնալու ենք:

— Իսկ հողը ի՞նչ պիտի անէք:

— Հողը յետոյ կժախենք:

— Իսկ հարեան գիւղերը չէ՞ն ուզում ձեր հողը ստանալ:

— Ոչ: Նա նրանց էնքան էլ հարկաւոր չէ. նրանց վարելահողերը բաւականին առատ են:

— Իսկ ձեր տուն ու տեղը ի՞նչ կանէք:

— Ստիպւած ենք ամենաէժան գնով ծախել, համարեա թէ ձրի: Այ, իմ ունեցած-չու-

նեցածին մէկը միայն երեսուն ըուբլի է տալիս և էն էլ դժկամակութեամբ: Իսկ եղբօրս բաժնին էղբան էլ չեն տալիս: Մի խօսքով մեր ունեցածի արժէքի հինգերորդ մասն էլ չենք ստանալու:

— Բայց քանի ըուբլով դուք կյօժարւէք տալ ձեր բոլոր շինութիւնները:

— Ես մեծ սիրով 40 ըուբլու էլ կտայի, իսկ եղբայրներս նոյնիսկ 25-ականով յօժար կլինեն, բոլորը միասին 90 ըուբլի: Գուցէ և՛ աւելորդ մանր-մունր բաներ էլ վրէն տայինք. եթէ թողնենք, միլենոյն է կոպէկ չենք ստանալու: Տեղափոխութեան ժամանակ 90 մանէթ ստանաս, քիչ փող չէ:

Վահանը մտատանջութեան մէջ ընկաւ: Նա անցեալ ամառ էլ աշխատել էր եղբայր Կարապետեանների մօտ և գիտէր, որ լաւ հողեր ունեն: Խոտհարքները, ճիշտ է, առատ խոտ չէին տալիս, բայց այդ բոլորը ուղղել կարելի էր: Հողը եթէ պարարտացւէր և լաւ մշակւէր, լաւ բերք կտար, խոտհարքներն էլ կլաւանային, իսկ ծառեր կարելի էր տնկել: Մի խօսքով այստեղ լաւ կարող էին ապրել ոչ թէ չորս, այլ գուցէ և 10-ը ընտանիք:

Վահանը, որ ամեն կերպ համոզւում էր նրանց այդ սխալ քայլը չանել, երբ տեսաւ, որ նրանք հաստատապէս վճռել են, մտածեց, թէ ինչ ձևով Կարապետեանների դաղթից յետոյ այդ տեղին տէր դառնայ: Մենակ ինքը, ի հարկէ, այդ-

քան հողը մշակել չի կարող և կարիք էլ չկայ: Բայց միթէ այս գործում իրեն չեն աջակցի անտուն-անտեղ և ուրիշ անապաստան թափառաշրջիկներ, օրինակ, հենց իր արտելի անդամները: Ամենից շատ սրանք կհամաձայնեն ապրել այդտեղ: Այդ լաւ կլինի թէ իրեն և թէ նրանց համար: Թափառական կեանքը արտելին բոլորովին դիւր չէր վալիս և նրանք ուրախութեամբ նստակեաց կդառնային:

Վահանը սկսեց աւելի խորը մտածել: Նա մտածում էր գիշեր ու ցերեկ, թէ աշխատանքի և թէ հանգստի ժամերին: Երբեմն աշխատանքի ժամանակ ասեղը ձեռքից վայր էր ընկնում և հաց ուտելու ախորժակ չէր ունենում:

Երրորդ օրը Վահանը Կարապետեանների հետ երկար խօսեց: Ապա 3 ժամ խորհրդակցեց իր արտելի հին անդամների հետ:

Հինգերորդ օրը նա Կարապետեանների մեծ եղբօր հետ բաղաք գնաց: Այնտեղ նրանք հինգ օր մնացին:

Յետոյ նրանք երկրորդ անգամ չորս օրով քաղաք գնացին: Երկրորդ անգամ գնալ-գալուց յետոյ Կարապետեանը իր եղբայրներին յայտնեց, որ Վահան Զաքարեանը նրա բոլոր շինութիւնները, արօտները, փոցխերը, սահնակները, աւելորդ սայլերը և ուրիշ երկրագործական գործիքները 60 ըուբլով գնել է, այնպէս որ նա էլ ծախելու բան չունի: Իսկ հողը Կարապետեանների

Թողնելուց յետոյ, գանձարանը կապալով տւեց Վահանին տասներկու տարով:

— Այ, եթէ դու մեր շինութիւններն ու գործիքներն էլ գնէիր, ինչ լաւ բան կլինէր,— ցանկութիւն յայտնեցին միւս երկու եղբայրները:

— Իսկ դուք բանիսով կտաք ձեր շինութիւններն ու միւս բաները,— հարցրեց Վահանը:

Այս եղբայրներն էլ մեծի նման 60 ըուբլի ուզեցին: Բայց մեծ եղբայրը հասկացրեց, որ նրանց ունեցածը իրենից աւելի քիչ արժէ: Յետոյ ակնարկեց, որ Վահանի ձեռքին փող չկայ, որ նա իսկապէս այդքան շինութեան կարիք չունի, այլ ապագայի համար է գնում միայն, գուցէ և նրան բոլորովին պէտք էլ չլինին: Այն ժամանակ եղբայրները համաձայնեցին և իրենց ունեցածը միասին ծախեցին 80 ըուբլով:

Վահանը շինութիւնների ու միւս իրեղէնների դրամը վճարեց կարապետեաններին նըրանց տեղափոխւելուց առաջ:

Եւ այսպիսով անհող Վահան Չաքարեանը իր ընկերներով յանկարծ տէր դարձաւ 150 դեսեատին հողի, երեք պատրաստի բակի, երկրագործական և այլ իրեղէններով:

Տների առնելը այդ երկրի բնակիչներին սաստիկ զարմացրեց: Սկսեցին դատողութիւններն ու ասէ-կօսէները: Շատերը Վահան Չաքարեանին հարուստ մարդ էին համարում: Բայց նա հարուստ չէր փողով, այլ՝ ձեռներէցութեամբ և մեծ պատրաստութեամբ:

Գաղթականների գնալը եւ նոր գիւղի նորոգութիւնը.

Վահան Չաքարեանը և նրա արտելի անդամները մինչև գարուն շրջում էին գիւղերում: Այդ ձմեռ նրանց թիւը հասաւ 15-ի: Նրանք այժմ համարեա թէ անկախ էին և երկսով և կամ երեքով միացած աշխատում էին: Նորերը կամ ջահէլները աշխատում էին փորձաժների և հասակաւորների հետ: Նրանք իրարից շատ էլ չէին հեռանում և աշխատանք պատահելիս մի խումբակը միւսներին օգնութեան էր փնջում: Իսկ եթէ աշխատանքի ժամանակ որևէ դժուարութեան էին պատահում կամ թիւրիմացութիւն էր ծագում, այն ժամանակ իմացնում էին Վահանին: Նա իսկոյն հասնում էր, աշխատանքը կանոնաւորում, անհրաժեշտ կարգադրութիւններ անում և թիւրիմացութիւնները վճռում: Սակայն այսպիսի դէպքեր քիչ էին պատահում: Բացի դրանից աշխատանքները այնքան էլ բարդ չէին և քաջ յայտնի էին արտելի անդամներին:

Վերջին օրերը Վահանը քաղաքից վերադարձաւ բերելով իր հետ զանազան սերմեր՝ գարու, ցորենի, սիսեռի, կուհատի, խոտի և բանջարեղէնի, նաև տնտեսութեան համար անհրաժեշտ պիտոյքներ:

Գարնան սկզբում Կարապետեանները սկսեցին ձանապարհի պատրաստութիւն տեսնել. նրանց օգնում էր իր արտելով հանգերձ Վահանը:

Քոչի օրը Նոր գիւղը լցւեց զբոսացի ժողովրդով. եկել էին գաղթողներին ձանապարհ գնելու ազգականները, ծանօթները և շրջակայ գիւղերի բնակիչները: Սա աւելի յուզարկաւորութեան էր նմանում: Տղամարդիկ տրտում էին, իսկ կանայք, բարձրաձայն լաց լինելով, մնաս բարով էին ասում հողին, խրճիթներին, ծանօթներին, ազգականներին ու իրենց ննջեցեալների գերեզմաններին:

Հազիւ կէսօրւայ մօտ գաղթականների կարաւանը, ամբոխով շրջապատւած, անյայտացաւ հեռուում և լսցն ու բարեմաղթութիւնները լռեցին:

Վահանը և իր ընկերները տխուր վերադարձան ամայացած գիւղի դատարկ բակերն ու տները: Փողոցում, այստեղ-այնտեղ թափւած էին՝ խոտ, յարդ, փայտի կտորտանք, իսկ խրճիթները աղբով լիքն էին:

— Դէհ, տղերք, էլ ի՞նչ էք շւարւել: Պէտք է էս բոլորը հաւաքենք, մաքրենք և կարգի բերենք:— Զէ որ հիմա սրանք մեր տներն ու բակերն են,—ասաց Վահանը: Չարմանալի է, որ տարեկան մի քանի անգամ, գոնէ մեծ տօներին, գիւղացիները միացած ուժերով կարգի չեն բերում և չեն մաքրում գիւղի փողոցները:

Ամենից առաջ ընկերները հերթով շրջեցին

բոլոր բակերը, տները և շինութիւնները: Վահանը մանրամասն բացատրեց, թէ ի՞նչ բան պէտք է նորոգել, ի՞նչը նոր աւելացնել և որ տեղերը ուղղել: Վերջապէս, մտան նաև Կարապետեանների հարևան և իւր տեղում մնացած, Տիգրան Ծառուկեանի տունը: Սա ցանկութիւն յայտնեց հենց այստեղ էլ մնալ և արտելի անդամ դառնալ:

Երկու ժամից յետոյ ընկերների համար ամեն ինչ պարզ էր և աշխատանքը բաժանւած: Ամենուրեք, չորս խրճիթում էլ, ուրազները շրխկում էին, սղոցները խզխզում և նոր տնտէրերի ուրախ խօսակցութիւնների ձայնն էր լսուում: Հին կեանքի փոխարէն սկսւում և եռում էր նորը:

Վահանը ամենին էլ հասնում էր, ցոյց էր տալիս, բացատրում և օգնում աշխատողներին: Տղերքից որը կտուրն էր բարձրացել, որը պատի գլուխը, որը բակերումն էր և ներքնայարկում. նրանք կտրում էին, սղոցում, տաշում, աղիւսներ էին շարում, շաղախ պատրաստում, հող էին քանդում, պատերն էին սպիտակացնում, լուսամուտներն էին ներկում կամ լւանում և այլն: Ծրագրում էին փողոցներն էլ զարդարել նորատունի ծառերով:

Նոր-գիւղը նման էր գարնան տաք օրւայ մրջիւնի բնին: Մինչև անգամ, ճնշւած ու թառամած Տիգրան Ծառուկեանն էլ, կարծես թէ վերածնւել էր և միւսներին հաւասար աշխատում էր:

Նոյն աշխատանքը երկար չտևեց: Նորոգութիւնները սովոր անապատանները իրենց գիւղը հրաշալի վերանորոգեցին: Այնպէս արին, որ էլ ճանաչել չէր լինում: Բակը նմանում էր մի մեծ և ընդարձակ հրապարակի, որի երկու ծայրերում կախած էին դարպասները: Բակի շորս կողմը շարած էին լաւ վերանորոգած տըները՝ հաստատուն ծածկով և մեծ ու լուսաւոր պատուհաններով: Բակերի մէջ տեղերը փոսեր էին փորել, ծառեր և թփեր տնկելու համար:

Տները պատերը ներսից սպիտակացրած էին, յատակները տախտակած: Բոլոր տների լուսամուտներն էլ աւելացրել էին, փչացած ապակիները փոխել և մեծ-մեծ խրճիթները միջնապատերով փոքրիկ սենեակների բաժանել: Երևում էր, որ ամեն շաբաթ պարտաւորւած մաքրում էին փողոցները:

Արօրները, փոցխերը, գութանը, սայլերը, եղանները, գերանդիները և վերջապէս բոլոր գործիքները դարսւած էին խորթանոցում:

Նոր-գիւղը արթնացել և առոյգացել էր. ամենուրեք երևում էր մաքրութիւն և կարգ ու կանոն:

XI

Արեւիկի անտառի մէջ հիւմնելը.

Նորոգութիւնները վերջանալուց յետոյ ընկերները մի օր հանգստացան: Նրանք շրջում էին իրենց

նոր տները, ուրախանում և երազում, թէ ինչպէս են ապրելու իբրև իսկական տնատէր և հողատէր գիւղացիներ:

Այդ օր Վահանը արտելի անդամներին մանրամասն պատմեց, թէ ինքը գիւղը ինչ ձևով ձեռք բերեց:

— Գիւղերում թափառելիս, էս երեք տարի էր ես միշտ մտածում էի, թէ ինչպէս անեմ, որ հող և տուն ունենամ: Պատահեց Նոր-գիւղը. այս հողը իբրև ծառերից գուրկ, խոտհարքներից պակաս և երկաթուղիներից հեռու ընկած տեղ, ես գանձարանից տարեկան շնչին գումարով կապալով վերցրի. դրա մէջ է մտնում նաև Տիգրան Ծառուկեանի մասը. իսկ թէ տներն ու սարք ու կարգը ինչպէս եմ ձեռք բերել—այդ դուք էլ գիտէք:

Այս երեք տանը, կարապետեանների թողած բոլոր իրեղէնների հետ միասին, վճարել եմ 140 ռուբլի: Այդ համարեա թէ իմ երկու և կէս տարւայ ընթացքում յետ գցած փողն է. այդ գումարը կարապետեաններին պէտք էր տալ նրանց զընալուց առաջ, որովհետև դադարելու համար այդ անհրաժեշտ էր. հենց դրա համար էլ նրանք այդ բոլորը մեզ էժան գնով ծախեցին: Սակայն հողը ձեռք բերելուց յետոյ, պէտք էր ցանել. սերմերը ես բերեցի մեր հարևան գիւղի սպառողական միութիւնից: Յատկապէս վերցրել եմ մաքուր, լաւ տեսակի և մեծ-մեծ հատիկներով սերմեր՝ ընդամենը 492 ռուբ. 60 կոպէկի: Սերմերը խոս-

տացել եմ հենց առաջին բերքին վերադարձնել։ Գնել եմ նոյնպէս՝ մագութ, երկաթ, մանր-մուշոր գործիքներ, նաւթ, շաքար, թէյ, լուցկի և այլն, բոլորը 200 ռուբլու։ Բացի դրանից սպառողական միութեան արհեստանոցում մօտ 300 ռուբլու անհրաժեշտ գործիքներ եմ պատւիրել։ Այդ բոլորի փողը մի բարի մարդուց փոխ եմ վերցրել՝ 5 տարւայ ընթացքում մաս-մաս վճարելու պայմանով։ Այսպիսով մենք պէտք է աշխատենք և՛ մեր գլուխը պահենք, և՛ իր ժամանակին պարտքներս վճարենք։ Ձեմ թագցնում—մի քիչ նեղութիւն կը քաշենք, բայց միայն առաջին օրերը, յետոյ լաւ կը լինի։ Յոյս ունեմ, եթէ մենք սրտանց գործի կաշենք, մեզ էլ կպահենք, տնտեսութիւններս էլ կ'կանոնաւորենք և հողատիրոջ, սերմատիրոջ ու փողատիրոջ մեր վրայ դրած յոյսերն էլ կարդարացնենք։

— Ախպէր, էդքան փողը ռոտեղից պէտք է տանք,—ասաց Տիգրան Ծառուկեանը։ Այ, էս է հինգ տարի է, Մնացականին տասը ռուբլի փող եմ պարտ, չեմ կարողանում տալ, հազիւ տոկոսն եմ տալիս։

Այս բանը արտելի անգամների վրայ վատ ազդեց։ Նրանցից շատերը սկսեցին անհանգստանալ։ Բայց Վահանը սառնասրտութեամբ ասաց.

— Ոչինչ, տղերք, կվճարենք։ Շուտով մենք նոյն իսկ մանր վարկի ընկերութիւն կը հիմնենք։ Տասնվեց հոգի ենք, Ծառուկեանի ընտանիքն էլ հաշւած՝ քսան։ Բացի ինձնից ու Ծառուկեանից,

դուք բոլորդ էլ ջանել, առժեղ տղերք էք, աշխատանքից վախեցող չէք։ Իսկ աշխատանքը ամեն բանի յաղթում է։ Հենց որ սկսեցինք աշխատել, ամեն բան կ'լաւանայ։ Դեռ մի երկու շաբաթ ենք միայն աշխատել, բայց տեսէք, ինչ դրախտ դարձրինք մեր նոր-գիւղը։ Միայն թէ իմ գնած գործիքներն ու իրերը տնտեսութեան համար քիչ են։ Մեզ դեռ շատ բան է հարկաւոր։ Մեզ հարկաւոր են՝ եզներ, կովեր, ոչխարներ և մի քանի կարեւոր գործիք։ Իսկ ինձ մօտ էլ կոպէկ չկայ։

— Ես ունեմ... ես էլ ունեմ... ես էլ ունեմ... լսեցին այս ու այն կողմից։

— Շատ լաւ։ Ուրեմն տէք ձեր ունեցածները։

Ընկերները սկսեցին զրպանները քրքրել, քրսակները թափ տալ, աղլուխների անկիւնների կշկուռները բանալ, և իրենց յետ գցածը տւեցին Վահանին։ Երբ բոլորը հաւաքեցին՝ 183 ռուբլի 73 կոպէկ փող գոյացաւ։ Բացի դրանից մի բանիսն էլ յայտնեցին, որ ուրիշների մօտ էլ փող ունեն։

— Այսպիսի սկզբնաւորութիւնից, ընկերներ, ես լաւ հետեանքներ եմ սպասում։ պարտքներս էլ կտանք և տնտեսութիւններս էլ հրաշալի առաջ կտանենք,—ասաց Վահանը ոգեւորւած։

— Ձեզնից վերցրած փողերի հաշիւը ես կ'զրեմ և կպահեմ։ Այս փողերով մեր ընթացիկ

ծախսերը կծածկենք: Իսկ եթէ մէկն ու մէկը մեզնից բաժանուելու լինի և ցանկանայ իր սեպհական տնտեսութիւնով զբաղուել, իր փողը յետ կստանայ:

XII

Նոր սկստութիւնը.

Յանքսը սկսելու համար Վահանը իր ընկերակիցներին հետեւեալ ծրագիրն առաջարկեց: Մի թղթի վրայ նա նկարել էր Նոր-գիւղի հողը և տարբեր սերմեր ցանելու հողամասերը տարբեր գոյներով ներկել: Ամբողջ հողը 150 դեսետին էր: Սրանից 3 դեսետինը անպէտք հող էր (ճանապարհ, փոքրիկ ձորակներ և այլն), իսկ 147՝ լաւ: Յանքսի համար հողը նա այսպէս էր բաժանել՝ 2 դեսետին կալատեղի և տան շուրջը պարտէզի համար, 105 դես. ցանելու, 20 դես. խոտհարքի, 10 դես. արօտատեղի և 10 դես. նոր անտառ տնկելու համար, վերջինս Ծառատունկի տօն անունով յատուկ օր յատկացնելով: Իր ծրագիրը Վահանը այսպէս բացատրեց.

— Կարապետեանները, ինչպէս և մեր գաւառի բոլոր բնակիչները, դաշտը երեք մասի են բաժանում՝ աշնանացանի, գարնանացանի և հերկի համար: Իսկ մենք դաշտը կբաժանենք 8 մասի և բացի հացահատիկներից կցանենք նաև այն խոտերի սերմերը, որ ես բերել եմ: Մեր հողերի

երկու բաժինը կցանենք գարնանացան՝ ցորեն, դարի և կաւահատ, երկուսում—աշնանացան ցորեն, երկուսում—խոտ, իսկ միւս երկուսը կլինեն արօտատեղի և կհերկեն: Այն կտորները, որ Կարապետեանները գարնանն էին ցանել, մենք կհերկենք, իսկ այն հողերը, որ մի տարի հանգստացել են (չեն ցանել), մենք կցանենք՝ գարի, կաւահատ, սիսեռ և ցորեն: Գարու հետ կցանենք և խոտ:

Վահանը իր թղթի վրայ ցոյց տուց, թէ ինչպէս յարմար է հողը 8 մասի բաժանել և որ մասում ինչ ցանել: Ընկերակիցներից մէկը նկատեց, որ իրենց արտերը կպած լինելով հարևան գիւղերի հողին և նրանց արտերի հետ չցանուելով, վերջիններիս անասունների կերքման կենթարկուեն: Նրան Վահանը պատասխանեց, որ իրենց հողի շուրջը պատնէշ պիտի կանգնեցնել:

— Բայց այդ շատ թանգ կնստի,—ասաց խօսակիցը:

— Ոչինչ, հողէ հասարակ պատ կբաշենք, որ էնքան էլ թանգ չնստի:

Միւս օրը Վահանը, մի բանի ընկերների հետ դաշտը բաժանեց և սահմանները որոշեց, իսկ միւս ընկերները գնացել էին հարևան գիւղերը՝ ուտելիղէն և ուրիշ անհրաժեշտ իրեր գնելու:

Վահանը իր հարևան գիւղացիներին ասել էր, որ գարնանացանի համար եղներ, արօր, փոցիս և ցանողներ չի ունենայ և խնդրել էր, որ

մի օր իրեն օգնութեան գան. բոլորն էլ սիրով ընդունել էին նրա առաջարկը և խոստացել էին մի օր իրենց եզներով ու գործիքներով նրան օգնութեան գալ: Մի քանի մարդ էլ ուղարկել էր այս օգնողներին իմաց տալու համար:

— Նա մեզ շատ բանի մէջ է օգնել, մենք էլ պարտաւոր ենք նրան օգնելու, — ասել էին հարեան գիւղացիները:

Հրաւիրելու գնացողները իրենց հարեան գիւղացիներին յիշեցնելով նրանց խոստումը, հրաւիրում են թէ իրենց օգնելու և թէ նոր անտեսութիւնը շնորհաւորելու: Նրանք ամեն միմեկին հասկացնում էին, թէ ով ինչով պէտք է գար՝ արօրով, գութանով, փոցխով, թէ սայլով:

Օգնութեան գալու օրը նշանակւած էր ապրիլի երեսունին:

XIII

Օգնութեան եւ ճնորհաւորէի գալը.

Այդ գաւառում հնուց մի գեղեցիկ սովորութիւն կար. այն է՝ հարեանները երբեմն օգնում էին իրենց համադիւղացու կամ համագաւառացու դաշտային աշխատանքներին: Այդ օգնութիւնը առհասարակ ստանում էին աղքատ մարդիկ. օրինակ՝ մանր որբերի տէր այրիները, եզ չունեցող հողատէրերը և ընտանիքները, որոնց միակ աշխատող ձեռքը կամ հիւանդ էր լինում կամ մեռած:

Այդպիսի օգնութիւնները համարւում էին աստուածահաճոյ գործ. այս դէպքում օգնողներին լաւ պատուում և հիւրասիրում էին. իսկ եթէ տանտէրը շատ աղքատ էր, օգնողները ոչինչ չէին ստանում:

Բացի դրանից, սովորութիւն էր, որ շնորհաւորութեան գնալիս հետները որևէ նւէր էին տանում:

Օգնութեան նախօրը օրը Նոր-գիւղում պատրաստութիւններ էին տեսնւում: Գիւղին մօտիկ սարքւած էին մսուրներ՝ եզներին կերակրելու համար և բաւականին խոտ ու դարման էին պատրաստել: Հարեան գիւղերից հաւաքել էին՝ ամաններ, բաժակներ, գգալներ, կճուճներ և կաթսաներ: Բակում տախտակներից երկար սեղաններ էին շինել: Բաւականին կերակուրի պատրաստութիւն էր տեսնւած. տաանեակ հարեւանուհիներ օգնում էին տանտէրերին՝ հիւրերի համար կերակուր պատրաստելու և հաց թխելու:

Վահանը իր ընկերների մէջ նախօրօք պաշտօնները բաժանեց, թէ նրանցից ամեն մէկը ինչ պէտք է անէր աշխատանքի և հիւրասիրութեան ժամանակ: Մէկին կարգադրեց, որ վարանողների հետ գնայ, միւսին — ցաք (փոցխ) անողների, երրորդին — ցանողների, չորրորդին — աղբ կրողների, հինգերորդին — սերմը կրողների հետ և այլն: Յետոյ ընկերներից մէկին վերահսկիչ նշանակեց կերակրի վրայ, միւսին կարգ ու կանոն պահելու, երրորդին — հացի վրայ չըս-

կելու, չորրորդին—կերակուրը բաժանելու, հինգերորդին—ամանները հաւաքելու և լւանալու, վեցերորդին—եզներին կերակրելու և ջրելու և այլն: Իր կարգադրութիւնները Վահանը վերջացրեց հետեւեալ խորհրդով.

— Կարգ ու կանոնը ամեն բանից բարձր է, մանաւանդ երբ շատ մարդ է աշխատում: Դուք վաղը միայն պէտք է ընթացք տաք գործին: Թող ամեն մէկը իր պաշտօնը լաւ կատարէ: Այն ժամանակ ամեն բան իր տեղում կ'լինի, աշխատանքը շուտ կ'կատարւի և լաւ: Բացի դրանից, բոլորի հետ սիրալիր եղէք, որովհետեւ բոլոր օգնութեան եկողները գալիս են իրենց բարի կամքով, մեզ օգնելու ցանկութեամբ լցւած: Սիրալիր վերաբերմունքի հետ մեր աղքատիկ հիւրասիրութիւնը շատ համով կ'լծայ:

Առաւօտեան, ապրիլի 30-ին, բոլորը վաղ վեր կացան: Արեւածագի հետ սկսեցին երեւալ օգնութեան եկողները՝ գութաններով, արօրներով, փոցներով և սայլերով: Մի քանիսը մենակ էին եկել, իսկ ոմանք՝ կանանցով ու փոքր տղաներով, որոնք հօտադրութիւն պիտի անէին: Իւրաքանչիւր օգնող բարեւում էր դռանը կանգնած Վահանին, շնորհաւորում նրանց Նոր-գիւղը և որևէ նւէր տալիս: Վահանն ընդունում էր նւէրը, շնորհակալութիւն յայտնում, հիւրերին սեղանի մօտ մի թեթև հիւրասիրում և ուղարկում դաշար աշխատելու: Շուտով աշխատանքը սկսեց եռալ: 210 արօր վար էր անում, 35 մարդ ցանում էր,

105 փոցի ցաքանում էր ցանածը, 10 սայլ բանջարանոցը աղբ էր կրում: Վահանի հաշուով, գարնանացանի համար որոշւած 70 դեսեատինը վարելու և ցանելու համար՝ այսքան աշխատողները բաւական էին: Ժամի 8-ին օգնողներին հրաւիրեցին նախաճաշի:

Բայց մի կողմից դեռ էլի նոր օգնողներ էին գալիս. գալիս էին և այնպիսիները, որոնք կանչւած չէին: Վահանը սրանց խաթրին չգիպչելու համար, սրանց համար էլ էր աշխատանք գտնում:

Նա հարեան գիւղերից իսկոյն կացին, բան և աղբ կրելու սայլեր բերել աւեց: Արօրներով եկած նոր օգնողներին նա ուղարկեց հերկ անելու:

Ժամը երկուսին օգնողները ճաշեցին: Ճաշը շատ ուրախ անցաւ: Ճաշից յետոյ հասակաւոր օգնողները զով տեղ գտնելով մի ժամ աչքները կպցրին: Իսկ եզների մասին հոգում էին տանտէրերը:

Երեկոյեան ժամը 8-ին աշխատանքը վերջացաւ. օգնողները ընթրիքի նստեցին: Ընթրիքի ժամանակ ոմանք ցանկութիւն յայտնեցին օղի խմելու. սրանց Վահանը պատասխանեց.

— Ներողութիւն եմ խնդրում այն հիւրերից, որոնք կուգէին օղի խմել մեզ մօտ: Մենք օղի չենք պահում և սրանից յետոյ էլ չենք ունենալու: Օղին մարդկութեան մեծ չարիքներից

մէկն է: Օղիի փոխարէն խնդրում եմ թէյ հրամեցէք:

Ընթրիքից յետոյ հիւրերին թէյով հիւրասիրեցին: Մեծերը սկսեցին զրոյց անել, իսկ ջահէիները պար բռնեցին: Բաւական ուրախանալուց յետոյ, ժամը տասին օգնողները ցրեցին:

— Սրտանց շնորհակալ ենք, եղբայրներ, ձեր օգնութեան համար,—ասաց զգացւած ձայնով Վահանը: Լաւ գիտեմ, թէ ձեզ համար գարնանային մի օրը, որքան թանգ արժէ. սակայն դուք զոհեցիք մեզ համար ձեր մի օրը: Աստուծոյ և ձեր այսօրւայ մեզ հասցրած օգնութեամբ, մենք, անհող ու անտուններս, կղանանք ձեզ պէս գիւղացիներ: Կարիքի ժամին օգնելը—ամենամեծ գործըն է: Դուք մեզ օգնեցիք մեր կարիքի ժամին, օգնեցիք դէպի մեզ ունեցած սիրուց, օգնեցիք ձեր աշխատանքով. բացի դրանից՝ առատօրէն նուէրներ բերիք մեզ համար: Իսկ տնտեսութեան սկզբում մի կոպէկը մի ըուրլու չափ արժէք ունի: Մենք այժմ չքաւոր ենք և այս բոլորը ձեզ վերադարձնել չենք կարող. բայց գրա փոխարէն մեր սրտանց շնորհակալութիւնը յայտնելով ձեզ, խնդրում ենք Աստուծոյ, որ գրա փոխարէնը հարկւրապատիկ վարձատրի ձեզ...

Այստեղ արցունքները խեղդեցին Վահանին և նա լռեց:

— Այ բեզ բարի հոգի,—ասաց ծերունիներէց մէկը:—Ինքը բոլորին ձրի միշտ օգնել է,

իսկ երբ ուրիշներն են իրեն օգնում, լալիս է: Դէ ինչ անենք՝ օգնութեան փոխարէն—օգնութիւն: Իսկ թէ շատ բան արեցինք, այդ նրանից է, որ շատուր էինք. ախր ասած է՝ միութիւնը ոյժ է. «Դիւղը կանգնի՝ գերան կ'կոտորի»... Ձեր սիրուն օրինակն ու գաղափարը կաշխատենք գործով տարածել մեր գիւղերում:

Մօտ կէս գիշերին գնացին և մնացած հիւրերը: Նոր-գիւղը լռեց և խոր քուն մտաւ: Միւս օրը Վահանը դաշտ դուրս եկաւ. ամեն ինչ արւած էր այնպէս, ինչպէս ինքը կարգադրել էր:

Յատկապէս Վահանին ուրախացրեց իր ընկերների մէջ նկատած փոփոխութիւնը: Նրանք կարծես վերածնել էին: Բոլորը ուրախ էին և համարձակ: Ամբողջ գաւառի իրանց ցոյց տւած սէրը, նրանց մէջ զարթեցրել էր յարգանք, հաւատ դէպի իրենց և իրենց երջանիկ ապագան:

Ընկերները հաշուեցին և բերւած նւէրները՝ երեք հատ երինջ, երկու հատ քուռակ, տասը գառ, երկու աքաղաղ, երեսուն հաւ և վեց հատ էլ խոզի գոճի: Ապա բերել էին՝ 50 փութ գարի, 2 փութ սիսեռ, 2 փութ կուահատ, 102 արշին քաթան, 10 կծիկ թել, և բացի դրանցից՝ բաւականին թիւածքներ ու թթու գրւած ընդեղէն:

Նոր տնտեսները եռանդով գործի կպան: Նրանք ամբողջ օրը աշխատում էին դաշտերում, բակում, բանջարանոցում: Աղքատ ժամանակները, ուրիշի տներում թափառելիս, նրանք շատ

վիրաւորանքներ էին կրել: Առաջ նրանք նախան-
ձում էին իւրաքանչիւր չքաւոր գիւղացու, որը մի
փոքրիկ հիւղ, հագուստ և մի փոքրիկ կտոր հող ու-
նէր: Իսկ այժմ իրանք տէր էին՝ հողի, տուն ու տե-
ղի, գործիքների, ձիերի, եզների, կովերի և թռու-
չունների: Նրանք այլևս թափառաշրջիկներ չէին,
այլ հաստատուն, իսկական գիւղացիներ: Իրենց
տներում օրինակելի մաքրութիւն էր տիրում,
մեծ ուրախութեամբ կերակրում և հոգում էին
անասունների մասին. յաճախ դաշտն էին վա-
զում տեսնելու, թէ ցանքսը ինչպէս է աճում:
Նորոգւած նոր-գիւղը աւելի գրաւիչ էր թւում:
Այժմ կարծես թէ արեւը աւելի լաւ էր տաքաց-
նում, օդը աւելի մաքուր էր, իւր տանու հացը
աւելի համեղ, աշխատանքը թեթեւ և անկողինը
փափուկ:

Սովորաբար նոր-գիւղացիք հարկան գիւղե-
րից աւելի վաղ էին վերջացնում իրենց աշխա-
տանքները և երբեմն էլ նրանց գործին հասնում:
Որքան էլ որ իրենց գիւղը սիրում էին, այնու-
ամենայնիւ սիրով գնում էին հարկան գիւղերը աշ-
խատելու, որովհետեւ տնտեսութեան առաջին տա-
րին փողի կարիք ունէին՝ գործը յաջող առաջ
տանելու համար:

XV

Հ իւրր.

Անցաւ մօտ հինգ տարի: Հինգերորդ տարւայ
յուլիսին քաղաքից Վահանին հիւր եկաւ նրա
բարեկամ Լևոն Արամեանը:

Այդ օրը Վահանը իր ընկերների հետ խոտ
էր հարում: Կանաչ ու կարմիր խոտը խոնարհ-
ւում էր հնձուրների գերանդու առաջ և ապա
թռչունների թևի նման գետին փռւում, երկար
շարան կազմելով: Մէկը միւսի ետեից շարած
երիտասարդների գերանդին հնչում էր և աշխա-
տանքը արագ առաջ գնում: Վահանը հնձուրների
մէջ հինգերորդն էր: 55 տարեկան հասակում
նա դեռևս առողջ էր և աւելի եռանդուն, քան
45 տարեկան ժամանակը, երբ ապրում էր քա-
ղաքում: Վահանը յիշեց իր քաղաքացի բարե-
կամ Լևոն Արամեանի ասածը, թէ՛ «դու արդէն
ծերացել ես, էլ չես կարող երկրագործութիւն
անել: 45 տարեկան հասակում դժւարութեամբ
կ'ընտելանաս ծանր աշխատանքի»։ «Իսկ ես,
իսկապէս սկսեցի 47-ից և ընտելացայ», մտա-
ծում էր Վահանը, «այ, հիմա օրերով աշխատում
եմ, և թէև յոգնում էլ եմ, բայց այդ յոգնածու-
թիւնը նոյնիսկ դուրեկան է»:

Այդ միջոցին հնձուրներին մօտենում էր մի
սպիտակ հագնւած ծեր մարդ. դա Լևոն Արա-

մեանն էր, որը իր կառքը և իրերը Նոր-գիւղում թողնելով, շտապել էր Վահանին արտում տեսնելու:

— Օ՛, այդ դժու ես, Լեոն. վերջապէս հագիւ եկար...—ասաց Վահանը, նրան ընդառաջ գնալով:

— Բայց հօ եկայ. իսկ այս աւելի լաւ եղաւ. լաւ է ուշ, քան երբէք: Ես քեզ մօտ երկար եմ մնալու, բարեկամ. երեք օր:

Բարեկամները գրկախառնւեցին և համբուրւեցին:

— Վահան, հինգ տարւայ ընթացքում դու բոլորովին չես ծերացել, ասաց հիւրը:

— Իսկ դու բոլորովին սպիտակել ես, վրայ բերաւ Վահանը. էս մաքուր օդում, սիրածս աշխատանքի մէջ, նոյնիսկ երիտասարդանում եմ:

Լեոնը բարեկց և միւս բաներնեղին:

Վահանը իր շնորհքը հիւրին ցոյց տւեց. սա էլ փորձեց հարել, բայց տեսաւ, որ այնքան էլ հեշտ չէ, ինչպէս թւում է կողմնակի դիտողին:

Շուտով հնչեց նախաճաշի զանգը և աշխատողները վերադարձան սուռն:

XVI

Նոր-գիւղի ցանփներ.

Նախաճաշից յետոյ արտերի տնտեսները գնացին չորացած խոտերը հաւաքելու, իսկ Վահանը

Լեոնին տարաւ իր ցանքները ցոյց տալու: Մեծնից առաջ Լեոնի ուշքը գրաւեց հողէ թումբը:

— Որովհետեւ մեր հողերը հարեան գիւղացիների հետ միաժամանակ չեն ցանուում, մենք ստիպւած էինք այդ թումբը բարձրացնել, որ այդպիսով ցանքս ազատենք հարեանների անառնների ոտնատակ տալուց:

Ջրուցելով նրանք անցան երկու արտերը իրարից բաժանող ճանապարհով, որը մօտ չորս արշին լայնութիւն ունէր և ծածկւած էր մանր խիճերով: Ճանապարհի աջ կողմը փռւած էին աշնանացան ցորենի արտերը: Յանքսը հրաշալի էր, մարդաչափ բարձրացած. լիք-լիք հասկերը գլխները խոնարհ ծռել էին գետին, առատ բերք խոստանալով: Ճանապարհի ձախ կողմին ցնձին էին տալիս գարու, դարնանային ցորենի և սիսեռի արտերը: Գարին արդէն գլուխ էր բռնել: Գարնանացանի կողքին տարածւում էին կուահատի ցանքները կապտաչեայ ծաղիկներով զարդարւած:

— Գարու արտերի տեղում կուահատը հրաշալի աճում է, ասաց Վահանը:—Միշտ էլ առատ բերք է տալիս. կուահատը մեզ համար բաւականին ձեռնատու է: Մենք բերել ենք տւել մի ճնշիչ մեքենայ, որով շատ լաւ տեսակի ձէթ ենք ստանում. իսկ մնացորդը (քուսպը) եզների ու տաւարի համար իբրեւ կեր է ծառայում. քուսպը նախ մանրացնում ենք, ապա խառնում

յարդի հետ և տալիս կենդանիներին, որը շատ
չաղացնում է նրանց:

Բարեկամները դիտեցին միւս ցանքերը ևս:
Վահանը ցոյց տուաւ և հերկերը, որ արած էին
աշնանացանի համար. հերկերի մեծ մասը աղբով
պարարտացրած էր:

— Ընդամենը հրքան հող ունէք, հարցրեց
Լևոնը:

— 120 դեսետաին:

— Իսկ ի՞նչ կարգով էք ցանում սերմերը:

— Ամառայ սկզբին հողը հերկում ենք, աշ-
նանը ցորեն ենք ցանում. գարնանացանը և գա-
րին ցանում ենք խամ մնացած կամ խոտ ցանած
տեղերում. գարի ցանած տեղերը պարարտանում
են և միւս տարին հրաշալի աշնանացան են տա-
լիս. կտահատը նոյնպէս հողը պարարտացնում
է: Այսպիսով մի սերմով միւսի համար հող ենք
պարարտացնում, խոտներս միշտ առատ է լինում
և մեծ քանակութեամբ հող պարապ չենք թող-
նում:

Դաշտից վերադարձան տան մօտը գտնւած
պարտէզը. այստեղ Վահանը ցոյց տուաւ իր մեղ-
ւանոցը:

Մի տարի է միայն ինչ փեթակներ ենք
գնել: Արկղները մենք ինքներս ենք պատրաս-
տել և ամենալաւ ձևի. յոյս ունեմ, որ շուտով
այս ձրի աշխատող ջանասէրներից մեծ օգուտ
կ'ստանանք:

XVII

Բանջարաբուծութիւն.

Տներից ոչ-հեռու, բաւական մեծ տարա-
ծութեան վրայ փռւած էր բանջարանոցը: Ռչ
այնքան խորը թմբերի վրայ կանգնած էին կա-
ղամբի մեծ-մեծ գլուխներ. բանջարանոցի մեծ
մասը ծածկւած էր վարունկի թաղերով, ապա
գալիս էին գազարի, դդումի, կարտոֆիլի, բա-
ղուկի (ձակընդեղ), լոբիայի, բողկի, սոխի և գա-
նազան կանաչեղէնների մարգերը:

Բանջարանոցը բռնում էր մօտ 5 դեսետաին
տեղ և ջրւում էր մի բարակ ջրով, որը Նոր-
գիւղի միակ մխիթարութիւնն էր:

— Ինչո՞ւ էք այսքան շատ բանջար ցանում.
չէ՞ որ բոլորը դուք գործածել չէք կարող,—
հարցրեց Լևոն Արամեանը:

— Բանջարեղէն բաւական շատ ենք բանեց-
նում. նրանցից զանազան կերակուրներ ենք
պատրաստում, իսկ մնացած մասը գնում են այն
գիւղացիները, որոնք բանջարեղէն չեն ցանում:

— Իսկ ինչո՞ւ չեն ցանում,—զարմացած
հարցրեց հիւրը:

— Գլխաւորապէս այն պատճառով, որ հը-
նուց ի վեր բանջարանոց պահելը կանացի պա-
րապմունք են համարում. տղամարդիկ խուսա-
փում են բանջարանոցներում աշխատելուց. իսկ
կանայք ամառները սաստիկ ծանրաբեռնւած

են լինում գործերով: Նրանք տղամարդկանց օգնում են դաշտային աշխատանքների մէջ, երեխաների հոգան են քաշում, կով ու ոչխար են կթում, հաց են թխում, կերակուր են պատրաստում, տունը մաքրում են ու կարգի բերում, բացքն են անում և այլն, և այլն: Այս բոլորից յետոյ էլ բանջարեղէն տնկելու, ջրելու, քաղհանելու (խոտերից մաքրելու) ժամանակ չի մընում: Ահա այս պատճառով բանջարաբուծութիւնը գիւղերում չի դարգանում: Մի բանի տեղերում թէև ցանում են, բայց անխնամ թողնելով, ոչինչ չեն ստանում: Իրա համար էլ մեր բանջարեղէնը ամեն տարի, ինչպէս ասում են, իրար ձեռքից խլում են, այնպէս որ բացի մեր գործածելը, բանջարանոցից լաւ էլ օգուտ ենք փերցնում:

XVIII

Պ ա Ր Տ Է Ղ Ը .

Բանջարանոցից նրանք անցան նորատունկ պարտէզը:

— Պարտէզը տնկել ենք անցեալ գարնանը, ասաց Վահանը:

Պարտէզում շարէշար տնկած էին զանազան պտղատու ծառեր՝ խնձորի, ծիրանի, սալորի, կեռասի, բալի, տան կողքին՝ ընկուզենիներ. նորատունկ ծառերի արանքում երևում էին գա-

տալի, ճակընդեղի, կարաոֆիլի տունկեր: Պարտէզի հօդը լաւ փափկացրած էր և խոտից մաքրած:

— Էս լաւ է, եղբայր. դու ձեր բաւականութեան մասին էլ ես մտածել... շատ գովելի է, ասաց Լևոնը:

— Այո, ծառերը մեծ հաճոյք են պատճառում: Ամառւայ շոգին նրաշալի է լինում պարտէզում մի քիչ հանգստանալը. թէ հով է լինում և թէ օդը մաքուր. իսկ երեխաների համար հօդրախտ է: Ամառւայ շոգին նրանք առաւօտից մինչև երեկոյ խաղում են ծառերի սուերներում:

— Ձեզ, ամուրի մարդկանցդ, երեխէք ռոտեղից են:

— Ամառը և ձմեռը շատ երեխաներ են հաւաքում մեզ մօտ: Այ, լսում ես, հենց հիմա էլ ձայները գալիս են:

Իրաւ, հեռում լսում էին երեխաների կենդանի և խառնիխուռը ձայներ:

XIX

Գ ո Վ Ը .

Պարտէզից յետոյ բարեկամները հայեցին նաև գոմը. նա գտնւում էր եղբայր Կարապետեանների բակում, բայց ի հարկէ բարեփոխւած: Շէնքը սկսում էր գետնից մի քիչ բարձր և ոչ ներքնայարկ. պատերը քարից էին շինւած

և ունէին լուսամուտներ: Կտրանը կային օդանցք-
խողովակներ՝ փշացած օդը և աւելորդ տաքու-
թիւնը դուրս գալու համար: Պատերը մաքուր սը-
ւաղած էին:

Առողջ և պարարտ եզները կանգնած էին
մսուրների մօտ և հանգիստ որոճում էին. միւս
կողմը կապած էին կովերը. գոմի մի մասը յատ-
կացրած էր խոզերին:

Կենդանիների գոմի մաքրութիւնը Լեոնի
ուշքը գրաւեց:

— Կենդանիների և գոմերի մաքրութիւնը
մեր գիւղացիների համար երկրորդական բան է,
ասաց Վահանը. իսկ ես, ընդհանրապէս, դրա
վրայ ուշադրութիւն եմ դարձնում, որովհետև
այդ ձևով կենդանիների ոյժն ու առողջութիւնը
տեղն է մնում: Իսկ եթէ եզը առողջ է, մի քանի
անգամ աւելի լաւ է աշխատում և կովը կըրկ-
նապատիկ կաթ տալիս, ձագերն էլ արագ են
մեծանում և աւելի լաւն են դուրս գալիս:

— Բայց ինչո՞ւ տաւարը հիմի էլ գոմում
էք պահում, արածելու չէք ուղարկում:

— Այս ամառ մենք արօտատեղիներ չունենք:
Երկու արօտատեղիներն էլ վարեցինք. խոտհարք-
ները դեռ չենք հարել և հիմի այդ տեղերը կեն-
դանիներ ուղարկել չի կարելի, ամբողջ խոտը
կփշացնեն: Մենք առայժմ տաւարը գոմում ենք
պահում, մասամբ խոտով ենք կերակրում, մա-
սամբ գարմանով և առհասարակ ինչ-որ ճար-
ւում է:

Ապա Վահանը ցոյց տւեց ոչխարի գոմը:
Նա պատմեց, որ ամառը գիւղում բաւական շուր
է լինում, որին ոչխարը չի դիմանում: 6—7
ժամայ հեռաւորութեամբ, նրանք մի սարատեղ
(արօտատեղի) են կապալով վերցնում և մայիսի
կէսերից սկսած ոչխարը հովւի և մի քանի կա-
նանց ու երեխաների հետ սարը ուղարկում: Սա-
րումն են գտնւում և մանր-մունր տաւարը: Գիւ-
ղում մնացած կովերի կաթը հագիւ բաւականա-
նում է ուտելու համար: Ասաց, որ գնել են մի
տերգատ և պանիր պատրաստող մեքենայ, որոնց
պատրաստած իւղն ու պանիրը ոչ միայն իրենց
է բաւականացնում, այլև մեծ քանակութեամբ
ծախում են:

Ապա պատմեց, թէ ինչպէս իրենց տանից
հասցրած արջառները, ձիու քուռակները կամ ոչ-
խարը ամբողջ գաւառում գովւած է*): Նրանք
այս կենդանիները տալիս էին իրենց այն ան-
դամներին, որոնք առանձին տնտեսութիւն էին
սկսում: Ամեն մի հեռացող ստանում էր՝ մի
զոյգ եղ, մէկ կով, մէկ արօր և փոցխ: Արտելի
անգամներ ի կարծիքով այսքանը բաւական էր
նոր տնտեսութեան հիմք դնելու համար:

*) Հարկաւ, մենք ոչ մի միջոց չենք խնայում ամենալաւ ցու-
լերը ձեռք բերելու, անասունների տեսակն աղնաւոյնելու համար,
որի վրայ բոլորովին ուշադրութիւն չեն դարձնում մեր գիւղացիք,
և այդ պատճառով բոլորովին այլատեւած են մեր անասուն-
ները:

Ահնեսանցներ եւ արհեստներ.

Վահանը հիւրի հետ զրոյց անելով անցաւ դարբնոցը:

— Դարբնութիւնը փոքր գործ է, սակայն ամեն մի գիւղի անհրաժեշտ, ասաց Վահանը: Երբեմն մի փոքրիկ բան է կտրուում, գէ արի ու նրա համար 10—15 վերստ ճանապարհ կտրելի, հարեան գիւղը գնայ, որ շինել տաս: Շատ անգամ ամենաչնչին բանի համար օրեր ես կորցնում: Մի տարի դարբնոց չունէինք, շատ դժուարութիւն կրեցինք: Դարբին էլ հօ պատահաբար ճարեց:

— Ո՞վ է նա, ռաեղից ճարեցիք:

— Հիմի մեր ընկերներից մօտ տասը հոգի գիտեն այդ արհեստը, իսկ նրանք սովորել են մեզ մօտ եկած մի դարբին-երկաթագործից: Հրաշալի վարպետ էր, բայց գինի շատ էր սիրում: Մի շաբաթ մեզ մօտ ապրեց, քէֆն եկաւ, ինքն առաջարկեց դարբնոց շինել և սկսեց կոտրուած բաները նորոգել: Յետոյ սկսեց գովածներ շինել, որի նմուշը մենք բերել էին քաղաքից, արօրի խոփեր թափել: Շուտով սկսեց և քամիչներ շինել. իսկ հիմա մտադիր է կալսող մեքենաներ շինել: Երեք տարի է, որ մի կաթիլ գինի չի խմել, մտել է մեր արտելի մէջ և մտադիր է մինչև մահն էլ մեզ մօտ մնալու:

Դարբնոցից յետոյ դիտեցին ձիթահանքը: Ձիթահանքում ծեծում ենք թէ մեր և թէ ուրիշների կտահաար, փոխարէնը քուսպը ստանալով, որ տաւարին հրաշալի գերացնում է: Բացի դրանից ունենք և մի աղիւսի գործարան, որից հարեան գիւղերին էլ աղիւս ենք մատակարարում:

— Ուրեմն դուք բացի հողագործութիւնից, բաւականաչափ պարապում էք և արհեստներով:

— Այո, ձմեռը արհեստներով ենք ապրում: Մեր եկամուտի մէկ երրորդը ստանում ենք հողագործութիւնից, իսկ մնացած երկու երրորդը՝ արհեստներից: Ուրիշ կերպ գլուխ պահել չի լինի: Մեր կողմերում ձմեռը բաւական երկար է և այդ ժամանակամիջոցը մեզ համար իզուր է կորչում:

— Հապա այն գիւղացիները, որ արհեստով չեն պարապում, ուրիշի մօտ աշխատանքի չեն գնում, ինչպէս են ապրում:

— Մեծ մասամբ վատ են ապրում, առաւելագէս անբերրի հողի վրայ բնակեցողները: Հենց բերրի հողի վրայ էլ լաւ չես ապրի, եթէ երեք օրւայ փոխարէն մի օր աշխատես: Մենք այս հինգ տարւայ ընթացքում կարողացանք գործներս կարգի բերել և մի քիչ աւելի լաւ ենք ապրում, միայն նրա համար, որ բացի հողագործութիւնից՝ պարապում ենք նաև արհեստներով, ուրեմն և աշխատում ենք ամբողջ տարին անընդհատ, թէ մեզ և թէ ուրիշների համար:

— Հետաքրքրական է իմանալ, թէ էլ ուրիշ Բնչ արհեստներով էք պարապում, բացի մեր տեսածից:

— Է՛, շատ բաներով. ներկարարութեամբ, կտաւ գործելով, պարաններ մանելով, ոտնամաններ կարելով, հագուստ և սպիտակեղէն պատրաստելով, ծառի կեղևից և ուռից կողովներ և զամբիւղներ հիւսելով, յարդից զլիսարկներ գործելով. շինում ենք նաե՛ւ աթոռներ, լուսամուտի շրջանակներ, ապակիներ ենք բցում տեղը, յատակներ ենք շինում և այլն:

— Ինչո՞ւ էք ամեն արհեստի էլ ձեռնարկում: Աւելի լաւ չէ՞ մէկը-երկուսը ընտրէք և նրանով լուրջ զբաղւէք. այն ժամանակ աւելի լաւ կ'կատարելագործէիք արհեստը:

— Ճիշտ է, այդպէս աւելի լաւ կ'լինէր: Օրինակ բոլորս էլ նստէինք ոտնամաններ պատրաստէինք. ապագայում գուցէ մի որեւէ արհեստ ընտրենք: Մեր այժմեան ձևին դիմել ենք ակամայից, ստիպւած: Իրար գլխի հաւաքւել էինք պանազան տեսակի մարդիկ՝ ծեր ու ջահէլ, կին ու տղամարդ: Շատերը ծոյլ և անբան էին, մութալու կամ օրավարձով օրը մթնացնելու սովոր: Պէտք էր իւրաքանչիւրին տալ՝ հեշտ, իրենց ցանկացած, ծանօթ, միևնոյն ժամանակ օգտաւէտ աշխատանք: Այս պարագաներում ծոյլերն էլ առանց որոշ ստիպման աշխատում են. և երբ հեշտ բաներով ընտելանում են աշխատանքի,

անցնում են աւելի բարդ և դժւար գործեր կատարելուն:

Այսպիսով մարդիկ աննկատելի կերպով ընտելանում են աշխատանքի և արհեստ են սովորում:

— Ուրեմն դուք ճիշտ այնպէս էք վարւում, ինչպէս դպրոցում ուսուցիչները: Նրանք սկսում են հեշտից և պարզից, ապա անցնում են դժւարին և բարդին: Բայց չէ՞ որ ձեզնում չափահաս մարդիկ են:

— Իմ կարծիքով հասակաւորին գործի ընտելացնելը, դէպի աշխատանք գրաւելը գուցէ աւելի դժւար է, քան փոքրերին... — պատասխանեց Վահանը: Եւ վատ չէր լինի, եթէ մեր դպրոցներում երեխաներին հենց փոքրուց արհեստներ սովորեցնէին, կամ բացւէին տարրական արհեստագիտական դպրոցներ, որով մեծ զարկ կտրւէր արհեստների զարգացմանը:

XXI

Բնականաւորներ.

— Չէք ցանկանում արդեօք հիմի էլ մեր բնակարանները տեսնել, հրաւիրեց Վահանը հիւրին:

Մեծ տան առաջ, միմեանցից փոքրիկ պարտեզներով անջատւած, շարւած էր ութ տուն: Նրանք մտան առաջին տունը: Սենեակն ունէր

եօթ արշին երկարութիւն, վեց արշին լայնութիւն և հինգ արշին բարձրութիւն. ունէր հինգ լայն և բարձր լուսամուտներ. մէջ տեղից միջնորմով բաժանւած էր երկու մասի. երկու սենեակն էլ տաքանում էր աղիւսից շինած մի վառարանով: Տնակը պարզ էր, ինչպէս գիւղացու սովորական խրճիթը. միայն ամեն ինչ մաքուր էր և հաստատուն*): Այս տանը նրանք պատահեցին մի կնոջ, որի ձեռքը ցաւում էր և աշխատել չէր կարող: Ամուսինը 18 ամեայ տղայի և 13 ամեայ աղջկայ հետ օգնում էր խոտ հարողներին, իսկ փոքր աղջիկն ու տղան միւս երեխաների հետ միասին գտնւում էին ընդհանուր—մեծ տանը: Ընտանիքը տարւայ ընթացքում ճաշում էր ընդհանուր սեղանատանը: Ամառը և ձմեռը հասած երեխաները միւսների հետ միասին աշխատում էին. ձմեռը տանը մնում էին միայն 3 տարեկան տղան և 5 ամեայ աղջիկը: Մարդ ու կին ոտնաման կարողներ էին և դարձեալ տանն էին աշխատում: Իսկ ամառները ամբողջ ընտանիքը միայն երեկոներն էր միասին հաւաքւում

Միւս տներումն էլ ապրում էին 2—4 և աւելի անդամ ունեցող ընտանիքներ:

— Ընտանիքներն ինչո՞ւ են հաւաքւել ձեզ

*) Տները շինւած էին քարէ, հիմքի վրայ, պատերը աղիւսից էին, իսկ տանիքը կղմինտով ծածկւած: Վահանը պատմում էր, թէ կրի շաղախը կազմւած է 3 մասը աւազից և 1-ը մաքուր կրից: Որի պատճառով և պատերը ձուլած քարի նման աղիւս էր, չոր ու տոողջաբար:

մօտ, չէ՞ որ նրանք կարող էին և իրենց գիւղերում ապրել:

— Սրանք բոլորն էլ չքաւոր ընտանիքներ են: Դրանք կամ հացի պակասութեան, կամ դժբախտութեան և կամ բազմաթիւ երեխաներ ունենալու պատճառով զրկւել են եզներից և անասուններից: Մի քանիսը բոլորովին հողերից ձեռք են վերցրել, միւսները հարեաններին մի քանի տարի ժամանակով կապալով են տւել, ուսմանք էլ թողել են հասարակութեան: Հողից զրկւելով, տղամարդիկ և կանայք սկսել են շրջել և ուրիշների մօտ աշխատել, կամ թէ քաղաքի գործարանները գնալ: Շատերը ստիպւել են ընտանիքից կտրւել. սակայն այդ կեանքը նրանց ծանր է թւացել: Նրանք նորից ձգտել են դէպի հողը, դէպի գիւղը: Բայց դատարկ ձեռքով հողը ինչի՞դ է պէտք. պէտք են՝ եզներ, ուրիշ կենդանիներ, գործիքներ, շէնք, սերմ՝ ցանք ու տնտեսութիւն սկսելու համար: Ուրիշների մօտ բանւորութիւն անելով այդպիսի մարդիկ ոչինչ յետ քցել չեն կարողանում:

— Բայց ինչո՞ւ, մի քանիսի ասելով, նրանք քաղաքի գործարաններում աւելի շատ են ստանում:

— Ճիշտ է, մի քանիսը լաւ են ստանում, բայց լաւ էլ ծախսում են, տեղը ոչինչ չի մնում: Այ, երբ այս հողը կապալով վերցրինք, իր տեղում մնաց հին հողատէրերից Տիգրան Մառութեանը իր ընտանիքով. նա ապրեց իր հին տա-

նը, բայց միւս բոլոր բաներում բոլորի հետ հա-
ւասար է: Ծառուկեանի օրինակից մենք տե-
սանք, որ մեզանում կարող է ապրել և ընտա-
նիքով մարդը. և երբ ուրիշ ընտանիքատէրեր էլ
ցանկութիւն յայտնեցին, մենք նրանց էլ ընդու-
նեցինք: Միայն թէ ընդհանուր տանը նրանց տա-
րելը անյարմար էր. հենց դրանց համար էլ շինե-
ցինք այս փոքրիկ շէնքերը:

— Իսկ ինչո՞ւ կարապետեանների տներում
չ'ապրեցիք:

— Այդ տները շատ անյարմարութիւններ
ունէին. փոքր ընտանիքների ապրելու համար
շատ մեծ էին, իսկ ընդհանուրի ապրելու համար
ոչ մէկը յարմար չէր: Բացի դրանից խոնաւ էին
և շատ ցուրտ ու հակաառողջապահական: Մի
չորս տարի ապրեցինք և լաւ հիւանդացանք:

Բակի մէջ տեղից բարեկամները գնացին
դէպի մեծ տունը: Սա երկյարկանի էր և բաւա-
կան բարձր: Վերին յարկում կար մի բաւական
մեծ սինեակ, որը ձմեռը, լի օրերը, ծառայում
էր իբրեւ դպրոց, իսկ տօն օրերին այդտեղ լի-
նում էին ընթերցանութիւններ մոզական լապ-
տերով: Այստեղ էին տեղի ունենում նաև արտելի
անդամների շաբաթական ընդհանուր ժողովները,
ուր և վճառում էին նոր-գիւղի ընդհանուր գոր-
ծերը:

Վերին յարկում կային չորս հատ փոքր սե-
նեակներ ևս. դրանցից մէկում ապրում էր Վա-
հան Զաքարեանը, միւսում աշխատում էր ար-

տելի գրագիրը, երրորդը ծառայում էր իբրեւ
գրադարան, իսկ չորրորդում պահւում էին երե-
խաների պարապմունքներին վերաբերող անհրա-
ժեշտ դասական իրեր:

Մեծ շէնքի երկու ծայրերում ամուրի մարդ-
կանց և կանանց ննջարաններն էին, իսկ մէջտեղը
ծառայում էր իբրեւ ճաշարան. այստեղ աշխա-
տում էին նաև ձեռարկեստով պարապողները:

Խոհանոցը առանձին շէնք ունէր. շէնքը
քարեայ էր և մեկուսի, միայն միջանցքով մի-
անում էր սեղանատան հետ:

Տնից ոչ-հեռու գտնւում էին մառանը և
պահեստատունը:

Տնտեսութիւնը դիտելը այնքան երկար տևեց,
որ Վահանն ու հիւրը զրկեցին իւր ժամի եր-
կուսին տեղի ունեցող ընդհանուր ճաշից. սրանք
որպէս ուշացածներ առանձին ճաշեցին:

XXII

Փոխառութիւն

Ճաշից յետոյ Վահանը հիւրի հետ նստեց
տան առաջի ուռիների սուերում: Արևը
մայր էր մտնում. շոգն արդէն անցել էր. թը-
շուններն ու զեռունները օդը լցնում էին իրենց
աղմուկով:

— Ի՞նչ լաւ է այստեղ, ասաց Լևոնը: Սա-

կայն երբ հինգ տարի սրանից առաջ քաղաք եկար այս հողի կապալի համար աշխատելու, ես չէի հաւատում քո արտելի յաջողութեանը: Իսկ հիմա ասում ես, ձեր գործերը լավ են գնում:

— Ի հարկէ:

— Սակայն ինձ ամենից աւելի զարմացնում է այն, որ դուք առանց սեպհական միջոցների յաջողեցրիք այս բոլորը, տուն ու տեղ դրիք, կենդանիներ և գործիքներ գնեցինք:

— Այդքան էլ անփող չէինք: Նախ հենց ես ինքս ունէի 140 բուբլի, որով և գնեցի Կարապետեանների տներն ու սարք ու կարգը. ուրիշ պայմաններում այդ կալւածքը արժէր 300 բուբլուց աւելի: Երկրորդ՝ ընկերներս տւեցին իրենց յետ դցածները՝ 183 բուբլի 75 կոպէկ: Երրորդ՝ մեր զիւղը շնորհաւորելու եկողները բերեցին զանազան իրեր, կենդանիներ մօտ 150 բուբլու. այդ նշանակում է հենց սկզբից մենք ունեցել ենք 500 բուբլի դրամագլուխ:

— Այնուամենայնիւ շատ չնչին դրամագլուխ է այդ:

— Գիւղի համար դա մեծ հարստութիւն է: Սակայն ամենից աւելի մեզ օգնեց փոխառութիւնը: Մեզ պէս չքաւոր մարդկանց համար փոխառութիւնը մեծ բարիք է: Ես նոյն իսկ համոզւած եմ, որ եթէ բոլոր չքաւորներին իր ժամանակին փոխարինաբար օգնութեան հասնէին, նրանց երեք քառորդ մասը թշուառ դրութեան մէջ չէր ընկնի: Խօսեցրէք նրանց և կիմանաք, որ

նրանք աղքատացել են կամ հրգեհից, կամ անբերրիութիւնից, կամ լծկան կենդանիների համաճարակից և ուրիշ այսպիսի պատահականութիւններից ու անսիրտ վաշխառուներից. սակայն եթէ օգնութեան հասնող լինէր, նրանք կարող էին շատ շուտով ոտքի կանգնել: Իսկ մենք փոխառութիւնից լաւ ենք օգտւել: Հողը ապառիկ կապալով վերցրինք և փողը վճարեցինք բերքը վերցնելուց յետոյ: Իսկ այդ տարւայ զարնանացանը հրաշալի պտուղ տւաւ: Փողի մի մասն էլ դու տւեցիր և այն էլ հինգ տարով:

— Պէտք է ասեմ, որ ես փողը տւել եմ իբրեւ նւէր այդ լաւ ձեռնարկութեան համար:

— Ի դուր: Բացի այդ՝ սերմը բերեցինք քաղաքի գիւղատնտեսական պահեստից. նոյն ընկերութիւնից բերեցինք երկրագործական անհրաժեշտ գործիքներ:

— Որքան ինձ յայտնի է, դուք ձեր պարտքերը իր ժամանակին վճարում էք և հիմա շատ քիչ է մնում:

— Այո, մենք հետևում ենք ժողովրդական այն առածին, որ ասում է՝ «մեղքը լալով, պարտքը տալով»: Սակայն վճարելը չի նսեմացնում փոխառութեան տւած մեծ օգուտը և այն էլ երկար ժամանակով տւած փոխառութեան:

— Երկար ժամանակով վերցրած փոխառութիւնը ինչո՞վ է լաւ:

— Մեզ համար կէս տարով և նոյն իսկ մի տարով փոխառութիւն անելը միանգամայն ձեռն-

տու չէ: Վաճառականի նման մեր դրամագլուխը տարեկան մի քանի անգամ շրջանառութիւն չի անում: Միայն մեր սերմերի մէջ դրած դրամագլուխը, և այն էլ յաջող տարում, վերադարձնում են՝ գարնացանը—5, իսկ աշնացանը—12 ամսից յետոյ: Հողագործութեան տնտեսութեան միւս նիւթեղէններն ու իրերը դրամագլուխը վերադարձնում են երկար տարիների ընթացքում: Մեր փոխառութիւնները կնքում էինք հինգ տարուց ոչ պակաս և եթէ պարտքի մէջ չխընդհանրէինք, որովհետև գնած իրերը շատ խիստ էինք շահագործում:

— Իսկ հիմա շատ պարտք ունէք:

— Ոչ. պարտքներս թեթեւցրել ենք. մնացած պարտքն էլ բաւական շահաւէտ ենք օգտագործում. օրինակ՝ տարեկան 6 տոկոսով փոխառած փողով մենք ձիթհան մեքենայ ենք բերել տւել, որը տասից աւելի տոկոս է տալիս մեզ: Նոյնը և աղիւսի փուռը: Եթէ այդ փոխառութիւնը չլինէր, վաշխառուները մեր կաշին կ'ըբերէին ոչ թէ 6, այլ 60 տոկոս առնելով:

— Տես է, ինչ լաւ հաշուով մարդ ես դարձել: Կոպէկ-կոպէկ հաշիւ ես անում. իսկ առաջ, յիշում եմ, ստանում ու ծախսում էիր առանց հաշիւ:

— Հաշիւ պահելը գիւղացիներից սովորեցի: Աշխարհում սրանցից հաշուով մարդ չես գտնի: Նրանք ամեն մի կոպէկը հաշիւ տակ են դնում և վրան դողդողում: Կանայք հօ աւելի հաշուով

են. միայն թէ նրանց հաշւատեսութիւնը շատ չնչին է, շնորհիւ խորը տգիտութեան: Ես էլ ստիպւած եմ հաշուով լինելու, քանի որ ամեն շաբաթ ընդհանուր ժողովին հաշիւ եմ տալիս և ապագայ ծախքերի հաշեկշիռ ներկայացնում: Իսկ հասարակական գործի մէջ ամեն կոպէկ պէտք է հաշիւ մէջ մտնի և գնահատւի:

— Մի՞թէ քո ընկերները այդքան կասկածոտ են, հարցրեց Լևոն Արամեանը:

— Բանը կասկածոտութիւնը չէ. բանն այն է, որ հասարակական գործի մէջ մանրազնին հաշեատութեան դէպքում միայն գործերը կ'ընթանան առանց թիւրիմացութիւնների: Դրամական հաշիւներում մի փոքրիկ մթութիւնը ահագին դժգոհութիւնների առիթ է տալիս:

— Իսկ աւելի լաւ չէ՞ր լինի, որ ամբողջ տնտեսութիւնը ձրի կամ նւիրւած լինէր:

— Աստուած մի արասցէ: Ես հաւատացած եմ, եթէ մեր ստացւածքը նւիրւած լինէր, մենք երկու տարի էլ միասին չէինք ապրի: Պարտքերը թէև մեզ ծանրաբեռնում, բայց միևնոյն ժամանակ շաղկապում էին: Պարտքը վճարելու հոգսը մեզ աւելի մօտեցնում էր, աւելի եռանդով ու սիրով էինք աշխատում: Սրա հետ միասին մենք խորը գիտակցում էինք, գիտակցում ենք և ապագայում էլ կը գիտակցենք, որ ոչ թէ ողորմութեամբ և բարեգործութեամբ, այլ միմիայն մեր սեփական աշխատանքով ենք հասել և հասնելու ենք էլ աւելի բարեկեցիկ և անհոգ դրու-

թեան... Այդ պիտակցութիւնը թէ անցեալում
և թէ այժմ մեզ ոյժ է ներշնչել: Ճիշտ է, ա-
ռաջին օրերը գիւղացիները մեզ ձրի օգնութեան
եկան. այդ օգնութիւնը իրօք մեզ անհրաժեշտ
էր, որովհետեւ մենք լծկան և գործիքներ չունե-
ինք: Այո, մեզ օգնեցին: Այստեղ այդպիսի օգ-
նութիւնները սովորական բաներ են: Այդ մեզ
համար ստորացուցիչ չէր: Այժմ էլ մենք, երբ
հրաւէր ենք ստանում, մեծ սիրով օգնութեան
ենք գնում:

Նոյնը պէտք է ասել և շնորհաւորելու բե-
րած նւէրների մասին. նւէրները սիրոյ նշան
են: Մենք էլ ուրիշներին ենք տանում: Ձրի
օգնութեան և շնորհաւորութեան նւէրները—
դրանք փոխադարձ օգնութեան հին ձևերն են
միայն:

— Քո ընկերներն էլ այդպէս են մտածում:

— Այո, ձիշտ այսպէս...

— Ուրեմն շատ հպարտ էք...

— Սա, ընկեր Լևոն, հպարտութիւն չէ, այլ
միայն ինքնագիտակցութիւն, որ մեզ՝ անառակա-
տաններիս թանգ է և անհրաժեշտ: Նա հարստու-
թիւնից բարձր է և մեզ համար այն ոյժն է,
որի միջոցով մենք ձեռք բերինք ապահով վիճակ
և որ գլխաւորն է՝ կդառնանք միանգամայն գի-
տակից և ինքնուրոյն մարդիկ:

ԿԱՊԵՏՈՊՈԼԻՍ.

— Հետաքրքրական է, այդ ընտանիքներից
դատ, էլ ո՞վ է ապրում ձեր արտելում, հարցրեց
Լևոնը:

— Մեզ մօտ ապրողները մեծ մասամբ մե-
նակ, որք մարդիկ են: Նրանցից ոմանք մինչև
մեզ մօտ գալը պատասպարուում էին իրենց ազ-
գականների մօտ, միւսները սրա-նրա մօտ մշա-
կութիւն անելով էին գլուխ պահում: Մեծամաս-
նութիւնը մուրում էր միայն: Բացի որբիկներից,
մեզ մօտ ապրում են նաև հասակն առած ան-
տուն-անտէր մարդիկ՝ այրիներ—կին թէ մարդ—
երբէք չամուսնացածներ: Դրանցից մի բանիսը
սկզբում ընչազուրկ մարդիկ էին, միւսները—հար-
բեցողներ:

— Լսել եմ նոյնպէս, որ ձեզնում խմիչք-
ներ երբէք գործ չեն ածում:

— Այո, մենք չենք խմում: Մեզ մօտ գա-
լիս են թուրք հարբեցողներ և դադարում են
խմելուց. վեց հոգուց միայն մէկը չկարողացաւ
ձեռք քաշել խմելուց և հեռացաւ մեզնից:

— Ուրեմն դու հարբեցողներին էլ ես ուղ-
ղում:

— Ճիշտն ասած՝ նրանց օգնում է մեր
արտելի կենցաղը. իսկ ես միայն աշխատում եմ խոր-
հուրդներով ազդել նրանց վրայ: Ինքդ լաւ գիտես,

որ ես էլ էի խմում և իմ բոլոր ծանօթներն և բժիշկները ինձ համարում էին անբուժելի հիւանդ, մի կորած մարդ։ Այս կարծիքը աւելի հաստատուն էր թւում, մանաւանդ որ իմ հարբեցողութիւնը ժառանգական էր։ Այն ժամանակ ես ինքս բժշկեցի ինձ, իսկ հիմա ուրիշներին եմ բժշկում։ Մեղանում այդ շատ հեշտութեամբ է կատարւում։ Շրջակայքում գինի, օղի մօտ 10 վերստ հեռաւորութեան վրայ չես գտնի։ Հարբեցողը սկզբում կամ իմ կողքի սենեակումն է բնակւում, կամ պարտաւորեցնում եմ ամեն օր գալ մօտս։ Սկզբում ես նրան յայտնում եմ ակոհոյի մասին եղած բոլոր տեղեկութիւնները, ապա պատմում եմ նրա յատկութեան, նրա մեծ կամփոքը չափով մարդու վրայ թողած փաստակար ազդեցութեան մասին և այդպիսով բացատրում ակոհոյի բոլոր թերութիւններն ու առաւելութիւնները։ Ի հարկէ առաւել կողմեր առհասարակ չի գտնւում, իսկ փաստակար—ինչքան կուզես։ Եւ համարեա թէ բոլոր հարբեցողները, դրանից յետոյ, գալիս են այն եզրակացութեան, որ՝ չպէտք է խմել։

— Այդպէս պարզ և արձգ։

— Ոչ, այդ աւելի նրանց շտապողական եզրակացութիւնն է, այլ ոչ թէ որոշումը։ Սակայն այդ բոլորը բժշկութեան նախաբանն է, առաջին աստիճանը։ Հարբեցողը անպայման հենց առաջին առիթ եղած դէպքում էլի խմում է։ Բայց նա կամաց-կամաց սկսում է խղճահարւել։

Մի քանի օր անընդհատ նա ուրիշ տեղ

խմում է և տուն է վերադառնում հարբած. ես թողնում եմ, որ նա ուշքի գայ։ Մի քանի օր յետոյ մենք նորից ենք խօսում ակոհոյի, հարբեցողութեան մասին և այն էլ ամբողջ շաբաթներով։

— Հապա այդ քեզ կամ հարբեցողին չի ձանձրացնում։

— Բոլորովին։ Հարբեցողը, ինչպէս և միւս հիւանդները, սիրում են խօսել իրենց հիւանդութեան մասին։ Բայց բժշկութեան այս երկրորդ շրջանում հարբեցողը ինքն է սկսում փաստեր որոնել, որ իրօք ակոհոյը փաստակար է և քայքայում է մարդու առողջութիւնը, ստախօս դարձնում դէպի ամեն տեսակի յանցանքները, բթացնում բանականութիւնը և վերջապէս բարոյապէս ու նիւթապէս կազմալուծում։

Ապա քննելով մարդու կամքի ոյժը, հարբեցողը համոզւում է, որ բոլոր մարդիկ, ինչպէս և ինքը, կարող են յաղթել ակոհոյին, եթէ միայն ցանկանան։ Եւ ահա նա խօսք է տալիս՝ երբէք չխմել։

— Բայց տւած խօսքը պահում է։

— Ոչ։ Այդ խոստումը բժշկութեան երկրորդ շրջանի նշանն է և ցոյց է տալիս, որ հիւանդը կարող է առողջանալ։ Շուտով գալիս է և բժշկութեան երրորդ շրջանը։ Այժմ հիւանդը կարծես թէ սկսում է ճանաչել ինքն իրան, իր ընդունակութիւններն ու ոյժերը, որոնց համեմատում է իր խմելու թուլութեան հետ. ապա հետզհետէ իր մէջ գտնում է լաւ յատկութիւններ,

որոշում է օգտուել նրանցից, օգնել իր մօտիկներին և առհասարակ բոլոր մարդկանց: Սա բժշկութեան ամենաէական և միաժամանակ ամենադժար և տևական միջոցն է: Այդ շրջանում ակոհոլի և հարբեցողութեան մասին մենք քիչ ենք խօսում. ես միայն պատասխանում եմ նրա հարցերին: Հարցերի ժամանակ միայն ընթացք եմ տալիս նրա մտքերին և հետևում եմ նրանց փոփոխութեանը: Հարբեցողը առողջանում է: Նա այժմ չի երգում, խօսք չի տալիս, այլ ուղղակի չի խմում:

— Գուցէ ձեզնում թողնում են խմելը, որովհետև դա արգելւած է:

— Ոչ. մենք այդպիսի արգելք չենք դրել: Ցանկացողը կարող է գուրսը, ուրիշ տեղ խմել: Կարող են և գնել: Բայց մենք հենց սկզբից որոշեցինք ոչ ոքի զինով չհիւրասիրել. այդ օրից զինին և օղին մեզնում չեն գործածւում և կորցրել են իրենց յարգը: Այստեղ բժշկութեան գործում մեծ դեր է խաղում շրջապատը. մինչև իսկ ժառանգական հիւանդը եթէ զրկւի խմողների շրջանից, նա կարող է առհասարակ չհետևել ոգեմոլութեան ախտին:

— Բայց ի՞նչպէս:

— Արտելի հիմնւելու առաջին օրերում երկու շաբաթ մի անգամ, շաբաթ օրերը, ակոհոլի փնասակարութեան մասին կամ որևէ գիրք էր կարդացւում կամ հարբեցողութեան մասին զրոյց էինք անում: Ընկերները շուտով բոլորովին

թողին խմելը: Նոր անդամները տեսնելով, որ մենք չենք խմում, սկզբում իրենք քիչ - քիչ խմում էին, բայց յետոյ բոլորովին թողնում: Զրոյցներն ու ընթերցանութիւնը մեծապէս նպաստում են այդ բանին: Ընկերները չեն խմում, բոլորը վճռում են զինուց հեռու լինել և շատ անգամ խմել ցանկացողին զայթակղութիւնից ազատում են:

— Բայց ինչո՞ւ դուք կտրուկ ձևով չէք արգելում խմելը կամ հարբեցողութիւնը:

— Այդպիսի արգելքը մեզ հակառակ հետևանքի կհասցնէր, ասաց Վահանը: Այն ժամանակ խաբեբայ մարդիկ կաշխատէին թագուն խմել, իսկ հակառակել սիրողները կխմէին հենց միմիայն նրա համար, որ արգելւած է. չէ՞ որ «արգելւած պտուղը քաղցր է լինում»: Ահա երկու տարի է, որ մեր ժողովներում խօսք է լինում և ծխախոտի մասին: Սակաւ ծխողները շուտով կարողացան թողնել: Շատ ծխողներն էլ հետզհետէ սկսեցին թողնել: Ներկայումս միայն երեք մարդ է ծխում, գուցէ և նրանք էլ շուտով թողնեն: Իմիջի այլոց ասեմ, որ երկու հոգի էլ բթախոտ են ծխում, այն սխալ համոզումն ունենալով, որ իբր թէ դա նպաստաւոր ազդեցութիւն ունի աչքերի տեսողութեան վրայ:

XXIV

Արտելի ստացածքը.

Միւս օրը Լևոն Արամեանը վեր կացաւ ժամը 10-ին: Վահանն արդէն վեր էր կացել, մի քիչ աշխատել, նախաճաշել և հիւրի համար էլ պարտիզում թէյ պատրաստել: Թէյի ժամանակ Լևոնն սասց.

— Լաւ քնեցի, անպէ՛ր, հրաշալի օդ է: Երեկոյեան երկար ժամանակ չկարողացայ քնել և շարունակ ձեր Նոր-գիւղի մասին էի մտածում: Նա հրաշալի կազմութիւն ունի: Ամենուրեք տիրում է կարգ ու կանոն: Չսայած բնակիչների քանակին և խայտաբղէտութեանը, աշխատանքը համերաշխութեամբ առաջ է գնում: Իսկապէս ի՞նչ է իրանից ներկայացնում ձեր այս գիւղը. նա մի փոքր նմանում է աշխատանքի տան, սակայն այն տարբերութեամբ, որ դուք ինքներդ էք գործի տէրը և բացի այդ ոչ միայն բարեգործներից ոչինչ չէք ստանում, այլ և ինքներդ էք բարեգործութիւն անում: Մասնաւոր կալւածի նման էլ չի ձեր գիւղը, որովհետեւ ամեն ինչ համայնական է: Կազմով և աշխատանքի տեսակով գիւղացի էք, իսկ կարգ ու կանոնով՝ մի տարբեր բան: Գիւղում ամեն տնատէր ունի իր առանձին կտոր հողը, իր տնակը, կենդանիները, արօրը և այլն: Իսկ ձեզնում ամեն ինչ համայնքին է պատկանում: Աւելի շուտ

կարելի է ձեզ արտել անւանել, բայց արտելի էլ ամեն բանով նման չէք, գոնէ ես այդ չեմ տեսնում: Խնդրում եմ բացատրիր ինձ այդ բոլորը. դուցէ դուք մի այնպիսի կանոնադրութիւն կամ պայմանագիր ունէք, որի իւրաքանչիւր կէտի բարեխղճօրէն իրագործելը մի նոր բան է ստեղծում:

— Այո, ձեզ, քաղաքացիներիդ համար միշտ անհրաժեշտ են զրաւոր պայմաններ և կանոններ, բայց մենք այդպիսի բան չունենք, թերեւս ապագայում ունենանք: Առայժմ ձեւաւորւած, զրաժ ոչինչ չկայ:

— Բայց ի՞նչպէս կարող են այսքան մաքրիկ ապրել միասին, առանց որոշ կանոնադրութեան, պայմանի:

— Ոչ, այդ կարգ ու կանոնը մեզնում կայ, որոշ օրէնքներ մենք ունենք, սասց Վահանը: Մենք չենք յօրինել այդ կանոնները, այլ աստիճանաբար, զանազան կենսական պահանջների շնորհիւ առաջ են եկել որոշ պայմաններ: Սակայն անփոփոխ, յաւիտենական կանոն չունենք և չի սահմանւած:

— Ուրեմն ի՞նչպիսի կանոններ ունէք:

— Մինչև այժմ մեր գիւղում այսպէս է սահմանւած, որ գիւղի բոլոր ստացւածքը ընդհանուր-ընկերական սեփականութիւն է. օրինակ՝ հողը, շինութիւնները, կենդանիները, լծկանը, մեքենաները, գործիքները, հացահատիկները, հազուստը, կերակուրը, փողը և տնտեսութեան

այլ ստացւածքները: Հաշի պարզութեան համար մեզնում այդ բոլորը դրամի ենք վերածել:

— Բայց գիւղը հիմնելիս հողը միայն քո անունով է կապալով վերցրած. բացի դրանից, ինչպէս դու ինքդ ասացիր, ձեր մի բանի ընկերները ունին իրենց շնչի հողը:

— Ճիշտ է, կապալը իմ անունով է, բայց իրօք նա բոլորին է պատկանում. այդպէս և միւս անդամների շնչի հողերը գտնւում են ընկերութեան տրամադրութեան տակ: Մեզնից հետո գտնուող և անյարմար հողերը կապալով ենք տալիս այն գիւղի հասարակութեանը, որին մօտ են գտնւում յիշեալ հողերը. իսկ ուրիշների հողերը մենք ինքներս ենք մշակում. այդ հողերի հարկը և միւս ծախքերն էլ մենք ենք վճարում: Եթէ կապալով տրւած հողը բացի իր ծախքերը աւելի փող է վաստակում, այդ աւելորդը մենք գրում ենք իբրեւ հողատիրոջ եկամուտ. իսկ եթէ հողը իր եկամուտից աւելի ծախք է վերցնում, այն ժամանակ պակասը դուրս ենք գալիս էլի հողատէրից: Մի խօսքով ընկերութեան իւրաքանչիւր անդամի ստացւածքը անդամագրելուց յետոյ մտնում է միութեան տրամադրութեան տակ, գնահատւում է և նրա բերած օգուտն ու փասքը հասնում է իր տիրոջը: Մենք համոզւած ենք, որ այս ելքը միակն է արտելի յաջողութեան համար, և այսպիսով մենք յաջողութեամբ առաջ ենք տանում մեր միութեան գործը:

XXV

Արսելի կազմը.

— Ի՞նչ ձևով և ի՞նչ մարդկանցից կազմւեց ձեր ընկերակցութիւնը, հարցրեց Լևոն Արամեանը:

— Ուրեմն մոռացել ես, ասաց Վահանը. — ես քեզ մի անգամ պատմել եմ այդ: Ընկերակցութիւնը կազմւեց պատահաբար: Անապաստան, տնից, հողից զուրկ մարդիկ մէկը միւսի յետեից հաւաքւեցին շուրջս. դրանք մեր շրջանի որբերը, չքաւորները և թշուառներն էին: Նրանք ինձ հետ կազմեցին մի միութիւն: Ապա սկզբնական միութեան անդամների թիւը աճեց. եկան նոր տնազուրկ, հողազուրկ և երբեմն էլ հողատէր, բայց չքաւոր մարդիկ: Ապա հաւաքւեցին թէպէտև հողատէր, բայց անտուն, անլծկան, անգործիք ընտանիքներ: Եւ այդպէս բոլոր չքաւորները միացան:

— Ուրեմն բոլոր անապաստաններին էլ ընդունում էք, թէկուզ նրանք անդամաւոյժ, հիւանդ կամ անպէտք լինին:

— Ոչ, բոլորին չենք ընդունում: Խեղանդամներին, հիւանդներին և մանր երեխաներին և առհասարակ աշխատանքի անընդունակ մարդկանց չենք ընդունում, որովհետև այստեղ աղքատանոց կամ անկեղանոց չէ: Մենք անգամ ընդունում ենք որոշ փորձի ենթարկելուց յետոյ: Նորեկները փորձի համար մեզ մօտ 2—3 կամ 4

ամիս ապրում են: Այդ միջոցին մենք նրանց ենք ճանաչում և նրանք էլ մեզ. ապա թէ ընդունում ենք ընդհանուրի համաձայնութեամբ: Իսկ ինչ վերաբերում է ընդունելութեան սլայմաններին, կամ ընդունողների առանձնայատկութիւններին, մենք այդպիսի քարացած կանոններ չունենք: Սնում ենք և բացառութիւններ, օրինակ՝ մենք ունենք մի հինգամեայ որբ, որը ի հարկէ աշխատանքի ընդունակ չէ: Նա մեր անգամ որբեայրիներէից մէկի ազգականն էր, որը ցանկացաւ նրա մասին հոգալ: Պէտք է ձեզ ասեմ, որ մեր շարքերում կան, այսպէս կոչւած, փչացած մարդիկ ևս. դրանցից մէկը ջահէլ ժամանակ երեք անգամ բռնել է ուտելոյէն գողանալիս. նա դրանով կերակրելիս է եղել իր անչափահաս քոյր ու եղբայրներին. միւսը հարեաններից մէկի թելադրութեամբ ու դրդումով գողացել է մի ուրիշի եզը և յայտնի է եզան գող անունով. երրորդը, որ հրձիգ անունով է յայտնի, 17 տարեկան միջոցին գաւառական դատարանում անտեղի պատժի դատապարտելուց յետոյ, սարսափելի զրգուած, խելքը կորցրած դրութեան մէջ հրդեհել է գիւղի խոտերը: Երեքին էլ ամբողջ գաւառում աւազակ—Սիբիրից փախածներ էին անւանում: Նրանց կատաղեցնում, գազան էին դարձնում. մինչդեռ նրանք բարի մարդիկ են: Նախկին գողի հետ ես արտելից առաջ ծանօթ էի: Նա այժմ մեզ մօտ զրազիր է և անպայման մաքուր մարդ: Եզան

գողն ու հրդեհողն էլ—երկուսն էլ ազնուութեամբ շատերից բարձր են, իսկ ընդունակութիւններով առանձնապէս աչքի են ընկնում:

— Որքան ժամանակով էք ընդունում անգամներին:

— Ամենաքիչը հինգ տարով. բայց կան 7 տարով և մշտնջենաւոր ապրողներ: Որոշւած ժամանակամիջոցը կարող է և կրճատւել, որովհետեւ իւրաքանչիւր ոք կարող է հեռացւել, եթէ ի հարկէ յարգելի պատճառներ երևան գան:

— Ինչո՞ւ էք հեռացնում. այդ կանոնը ինչո՞ւ էք ընդունել:

— Ճիշտն ասած այդպիսի կանոն որոշակի չունինք: Մինչև այժմ հեռացրել ենք միայն մէկին, որովհետեւ նա վատ ընկեր էր՝ ծոյլ էր, ընկերներին խաբում էր, տաւարը քաղցած էր թողնում, իրերը փչացնում էր, կողմնակի աշխատանքից խուսափում էր: Շատ անգամ ընկերները յանդիմանեցին, համոզեցին նրան, բայց իզուր: Ծոյլ ու բթամիտ մարդ էր և անուղղելի: Վերջի վերջոյ բոլորի համբերութիւնն էլ հատաւ և դրան հեռացրին:

— Յամենայն դէպս անյարմար է արտելի անգամներին հեռացնելու համար որոշ կանոններ չունենալը:

— Ըստ իս՝ նախօրօք հնարաւոր չէ որոշել այն պակասութիւններն ու յանցանքները, որոնց հիման վրայ սրան կամ նրան պէտք է հե-

ռացներ: Մարդիկ ենթակայ են ամեն տեսակ
թերութիւնների, իսկ մեզ մօտ եկողները՝ ևս
առաւել: Նրանք երկար ժամանակ չբաւորութիւն
քաշած լինելով՝ ամեն տեսակ ստորացման են
ենթարկւել, ուստի ամենափառ յատկութիւններ
են իւրացրել. ամեն փառ բան էլ նրանք գիտու-
թեամբ հօ չեն գործում: Ես արդէն ասացի, որ
խոշոր յանցաւորներին դատում ենք արաւի բո-
լոր անդամների մասնակցութեամբ, սակայն վը-
ճիւղը իսկոյն և եթ չենք արձակում, այլ յետա-
ձգում ենք: Եւ, իրօք, շատ յաճախ պատահում
է, որ յանցաւորները խոստովանում են իրանց
մեղքը. մենք էլ հետեւելով ժողովրդական առա-
ծին թէ՛ «վայր ընկածին չեն խփում»—ներում ենք:
Իսկ եթէ նախօրօք որոշես յանցանքները և նը-
րանց համապատասխան պատիժները, ճարպիկ
մարդիկ մատնանշած յանցանքները չեն գործիլ,
բայց դրա փոխարէն գաղտնի աւելի վատթար
գործեր կը նիւթեն: Հնուց գիւղացիների մէջ ար-
մատացած սովորութիւն է՝ միասին հաւաքւել,
ժողով կազմել և ընդհանուր գիւղական գործերը
որոշել, միմեանց դէմ բողոքներ լսել, և դրանց
որոշումները կամ վճիռները տալ: Որոշումներն
ու վճիռներն անում են ընդհանրութեամբ և
ամեն ոք պարտաւոր է հնազանդւել համայնքի
վճռին. և իբրեւ արգարադատութեան հիմք ծա-
ռայում է «Ձայն բազմաց—ձայն Աստուծոյ»
սկզբունքը: Եթէ դուք, քաղաքացիներդ, ներկայ
լինէք գիւղական ժողովներին ու տեսնէք, թէ

ինչպէս ազատ, մանրամասնօրէն ու բազմակող-
մանի են դատում բոլոր գիւղական հարցերի
մասին, կ'զարմանաք: Գիւղերում, ուր որ սո-
վորութիւն չէ դարձել կաշառք առնելը, արդա-
րացի որոշումներ են տալիս: Մեր ժողովներն էլ
գիւղական ժողովների նման են: Մենք, գիւղա-
ցիներս, առհասարակ պահանջկոտ ենք հասարա-
կութեանը կամ ընկերներին ֆիաս բերող ամեն
բանի վերաբերմամբ: Գիւղերում յաճախ կլսէք՝
«հարկանաբար» և «առանց վիրաւորելու» (խա-
թրին չդիպչել), իսկ մեզնում՝ «ընկերաբար» և
«առանց ֆիասի» բառերը:

Եւ այդպէս՝ ապրում ենք մէկը բոլորի և
բոլորը մէկի համար:

XXVI

Յնակարան, կերակուր եւ հագուստ.

— Ուրեմն, նշանակում է ձեր ստացւածքը
համայնական է. իսկ ուտելիքի, բնակարանի և
հագուստի համար ի՞նչ կարգեր ունէք:

— Ուտելիքը բոլորի համար ընդհանուր է և
պատրաստում է ընկերակցութեան խոհանոցում:
Հասակաւորն ու երեխաները, բացի ծծկեր երե-
խաներից, բոլորն էլ ճաշում են ընդհանուր սե-
ղանատանը: Եթ տարեկանից փոքր երեխաները
առանձին են ճաշում, օրական չորս անգամ և ա-
ւելի, միայն թեթեւ կերակուր է լինում: Մեծերը

ուսումնամեծ օրական երեք անգամ, մեծ մասամբ բուսեղէն և կաթնեղէն:

— Կարծեմ ձեզ մօտ կերակուրը բաւականին լաւ և առատ են պատրաստում. ես գոնէ մեծ հաճութեամբ կերայ:

— Գիւղացիները վաղուց են նկատել, որ եթէ ուզում ես ձին լաւ քայլի, գարին առատ տուր. իսկ մարդկանց համար ասում են՝ «ով ինչպէս ուտի, այնպէս էլ բան կանի»: Մենք էլ կուշտ ուտում ենք, որ լաւ աշխատենք: Եթէ կերակուրները անհամ են լինում, տանտիկիներին լաւ յանդիմանում ենք, նրանք էլ ամօթից աշխատում են լաւ եփել: Ուրիշ կերպ էլ չի կարելի. չէ՞ որ կերակրի մթերեղէնը փող արժեն, ինչո՞ւ ի դուր տեղը փչացնենք: Մեր տանտիկիները կերակուրը շատ սակաւ են փչացնում, որովհետեւ նրանք միմիայն կերակուր պատրաստելով են զբաղւում: Իսկ գիւղերում այդպէս չէ. այնտեղ կանայք թէ հաց են թխում և թէ կերակուր պատրաստում. դրա համար էլ նրանց կերակուրները յաճախ անպէտք են լինում:

— Իսկ ընտանիքաւորները իրենց երեխաների ընդհանուր սեղանատանը ճաշելու և իրենց առանձին բնակարանների համար չէ՞ն վճարում:

— Ոչ. աւելորդ ոչ մի կոպէկ չեն վճարում: Ընկերները այդ աւելորդ ուտողներից շատ էլ չեն վնասւում և յանցանք կ'համարէին ընտանիքաւորներից նրանց երեխաների համար փող վերցնել: Իսկ ինչ վերաբերում է առանձին բնա-

կարաններում ապրելուն, այդ հենց ամուրիների յարմարութեան համար է արուած, որ երեխաները նրանց բունը չխանգարեն ու չը ձանձրացնեն:

— Իսկ եթէ մէկը ուզենայ մի քաղցր բան ուտել, մէկին հիւրասիրել, հրաւեր սարքել...

— Ամեն ոք կարող է անել այդ իր սեպհական դրամով: Իսկ եթէ մէկի մօտ դործով, կամ տեսնելու համար մարդ է գալիս, այդպիսի հիւրերը հիւրասիրւում են ընդհանուր սեղանատանը: Առհասարակ իր օրերը շատ քիչ է պատահում, որ հիւր ունենանք: Մեզնում, ինչպէս և բոլոր գիւղացիների մէջ, միայն որոշ տօների են հիւրեր գալիս:

— Իսկ հագուստը, կարծեմ ամեն մէկինը իր սեպհականն է:

— Բանւորական հագուստը—ընդհանուր է: Իսկ եթէ մեր շորերը, հակառակ քաղաքի բարեգործական տներում ընդունւածի, տարբեր կրտորներից է, այդ նրա համար է, որ մեր դերձակներն ամեն մէկի ճաշակին յարմար են կարում, բայց կտորների գինը և տեսակը նոյնն է: Բայց որպէսզի մարդկանց ճաշակի վրայ չբռնանանք, տօնական հագուստը ամեն մարդ իր սեպհական դրամով և ցանկութեամբ է գնում:

XXVII

Աւստրալիական բաժնունդն.

— Ես տեսայ, որ դաշտային աշխատանքները միասին են կատարուում, ասաց Արամեանը. բայց արհեստով պարագելու և ուրիշների համար աշխատելու ի՞նչ կարգ է որոշւած:

— Այդ աշխատանքներն էլ ընդհանուր են համարուում, ասաց Զաքարեանը: — Արհեստով ամեն մէկը զբաղւում է պարապ ժամանակը, ինչքան որ ցանկանում է:

— Բայց ո՞վ և ի՞նչպէս է բաժանում ընկերներին՝ դաշտային, արհեստի և կողմնակի աշխատանքները:

— Արհեստներն ընկերները իրենց մէջ բաժանում են ընդհանուր խորհրդակցութիւնների ժամանակ՝ իւրաքանչիւրի ընդունակութեան համեմատ: Բոլոր աշխատանքների բաժանման համար տարեկան երեք կարգադրիչներ են ընտրւում: Սրանք աշխատանքը բաժանում են տարւայ եղանակների, ամիսների կամ շաբաթների վրայ. մօտաւորապէս որոշում են, թէ՛ իւրաքանչիւր աշխատանքի համար քանի՞ օր և քանի՞ աշխատող ձեռք է պէտք:

Աշխատանքը որոշ օրերում կատարելու կարգադրութիւնը անում է կարգադրիչի օգնականը, որը «օրապահ» է կոչւում: Օրապահները ամեն շաբաթ փոխւում են: Աշխատանքները կա-

տարւում են սրանց նշանակած կարգով. բայց աշխատանքի ընթացքում թէ կարգադրիչները և թէ օրապահները կատարում են միայն ցերեկւայ աշխատանքը:

— Ուրեմն աշխատանքը բաժանելու համար ամեն օր ժողով չի՞ գումարւում:

— Այդպիսի ժողովները միայն զուր ժամանակ կիլէին և կարգը կխանգարէին, պատասխանեց Վահանը: — Դրա համար բաւական են այն ժողովները, ուր բոլորի ներկայութեամբ աշխատանքը բաժանւում է ամիսների և շաբաթների վրայ: Ապա բոլոր դաշտային, արհեստի, օրապահների հերթապահութիւն, գիւղի գիշերապահութիւն, խոհանոցի համար ջուր կրել, խոհանոցում հերթապահութիւն անել և այլ աշխատանքները, մի շաբաթ առաջ, շաբաթական ժողովի ժամանակ յայտարարւում է, և նախորդ օրը ամենքին էլ յիշեցնւում: Այ, հենց երէկ երեկոյ գրագիրը այսօրւայ աշխատանքի կարգը յայտնեց:

— Ուրեմն, ձեզնում, այնուամենայնիւ, կան կառավարողներ. բայց ցանկալի էր իմանալ, թէ էլ ուրիշ ի՞նչ կարգեր կան ձեզնում:

— Ինչպէս արդէն ասացի, մեզնում, ինչպէս և բոլոր գիւղերում, գործերը վճուում են գումարած ընդհանուր-համայնական-ծխական ժողովներում: Համայնական ժողովը մեր գլխաւոր կառավարութիւնն է կազմում: Ինչ որ ժողովում որոշւում է, նոյնն էլ իրագործւում է:

Հենց այդ կանխաւ որոշւած գործերը ի կատար ածելու համար՝ յատկապէս ընտրւում են որոշ կարգադրողներ:

XXVIII

Կառավարողները եւ լուսաւորութեան գործին ծառայողները.

— Ի՞նչպիսի ընտրովի պաշտօններ ունէք, շարունակեց Լևոն Արամեանը:

— Այդպիսի պաշտօնները մի քանիսն են՝ ընկերակցութեան գործերի հաւատարմատարը, ուսուցիչը—միլենոյն ժամանակ և գրադարանապետ, սպառողական ընկերութեան անդամը, գանձապահը, խնայողական ընկերութեան անդամը, ապա աշխատանքի երեք կարգադրիչներ և գրագիրն ու նրա օգնականը: Դրանցից իւրաքանչիւրը պէտք է իրազեկ լինի և հոգայ մեր բոլոր գործերը: Նա անպայման մասնակցում է ընկերակցութեան բոլոր գումարումներին, ընկերութիւնից լիազօրւած է և հաւատարմաթուղթ ունի բոլոր գործերը տնօրինելու և կառավարական հիմնարկութիւնների հետ յարաբերութիւն պահպանելու:

— Հաւանականօրէն՝ այդ դու ես:

— Այո, ես եմ,—պատասխանեց Վահանը: Ուսուցչի մասին էլ պէտք է ասեմ, որ նա անգամազրեւել է մեր ընկերակցութեանը և միան-

գամայն լաւ ու տեղեակ անձն է: Նա ձմեռները երեխաների հետ պարապում է, իսկ ամառը շաբաթւայ մէջ երեք օր մեզ հետ աշխատում է դաշտում, չորրորդ օրը երեխաների հետ զբօսնելու է գնում, կամ կարդում է. կիրակի օրերը գրքեր է կարդում մեզ համար, իսկ մնացած օրերը իրան համար գրում է կամ կարդում:

— Ինչո՞ւ նրա հետ ինձ չես ծանօթացնում:

— Նա հիմա այստեղ չէ. գնացել է իրենց գիւղը ամուսնանալու: Ցաւում եմ, որ նրա հետ չծանօթացար, մի հազաւագիւտ մարդ է: Եւ որ ամենագլխաւորն է՝ մեր համայնքի համար շատ լաւ ուսուցիչ է: Այդ ես փորձով տեսայ: Նրանից առաջ մենք մի ուրիշ ուսուցիչ ունէինք: Բայց նրա ու սրա մէջ սար ու ձոր կայ: Երբ հողը կապալով վերցրի, որոշեցի Նոր-գիւղում դպրոց բանալ, լաւ իմանալով, որ առանց ուսման ընկերակցութիւնը թոյլ կլինի և կքայքայւի: Ամառը շրջակայ 5 գիւղերի համայնքը միասին խնդիր ներկայացրինք, որ մեր Նոր-գիւղում՝ իբրեւ կենտրոնում՝ դպրոց բանանք:

Ես Կարապետեանների ամենամեծ տունը ձրիաբար յատկացրի ուսումնարանին. իսկ ուսուցչի ծախքը հոգում է 5 գիւղերի համայնքը իրենց ծխի համեմատ: Ես հոգւոր կառավարութեանը խնդրեցի, որ մեզ համար մի լաւ ուսուցիչ ուղարկւի: Ուղարկւած ուսուցիչը կրթւած և գիտակ մարդ էր երևում: Նա շատ շուտով կար-

դալ-կրել սովորեցրեց երեխաներին. ամեն բան լաւ բացատրում էր: Սովորեցրեց թւաբանական չորս գործողութիւն և տարրական այլ գիտելիքներ. մի խօսքով ամեն ինչ անում էր կարգին և լրջօրէն: Աշակերտները դասարանում այնպէս էին լուռ նստում, որ ճանճի տղգոցն անգամ կարելի էր լսել: Առաւօտները հինգ ժամ պարապում էր երեխաների հետ, իսկ երեկոները՝ 2 ժամ գիւղի հասակաւորների հետ: Բացի դրանից աշակերտները տանն էլ ամբողջ ժամանակ դաս էին պատրաստում՝ անգիր էին անում, խրնդիրներ վճռում, գրքից արտագրում: Քննութեան ժամանակ աշակերտները գրում էին ուղիղ, առանց «ն» ու «յ» տառերը իրար հետ շփոթելու, բարդ խնդիրներ էին վճռում. կարդում էին յօդաժը, մի քանի մասի բաժանում, բառերը բացատրում և սկսում «իրենց խօսքերով» պատմել: Քննողը թեմական տեսուչն էր. նա հիանում էր ուսուցչի տաղանդով և խոստացաւ քաղաքում տեղ գտնել նրա համար:

— Բայց, Վահան, այդ ուսուցչից կարծես թէ ինքդ դժգոհ ես:

— Ճիշտն ասած, եղբայր, ես դժգոհ էի նրանից, որովհետեւ երեխաներին չոր ու ցամաք առարկաներ էր անգիր անել տալիս, բարդ խրնդիրներով ծանրաբեռնում նրանց ուղեղը, առանց աշխատելու նրանց մտաւոր աշխարհայեացքը ընդարձակելու, միտքը զարգացնելու: Օրինակ՝ մարդու զգայարանքների, կենդանիների, բոյսե-

րի, օդի, արեւի և ուրիշ այլ բաների մասին երեխաները ոչինչ չէին իմանում. իսկ աւելի սարսափելին այն էր, որ աշակերտները մեր գրադարանից չէին օգտւում, գրքեր չէին կարդում:

Ճիշտն ասած, այս բանը ինձ շատ տխրեցրեց: Հենց այդ ժամանակները մեր գիւղի մասին մի յօդաժ լոյս տեսաւ լրագրում, որից յետոյ ես մի ուսուցչից նամակ ստացայ: Նա գրում էր, որ լրագրում Նոր-գիւղի մասին կարդալով ցանկանում է դալ մեզ մօտ. եթէ մենք նրան, նա էլ մեզ դուր գայ, ընկերակցութեան մէջ կմտնի: Իսկ հարկէ համաձայնեցի: Ամառը նա եկաւ մեզ մօտ, ապրեց մինչև աշուն, մեզ մօտ ուսուցիչ եղաւ, ապա և ընկերակցութեան մէջ մտաւ: Միսակ Սահակեանը (այսպէս էր նոր ուսուցչի անունը) բոլորովին ուրիշ տեսակ ուսուցիչ էր:

Աշնան լաւ եղանակներին նա աշակերտների հետ դպրոցում պարապում էր միայն երկու ժամ, իսկ 5—6 ժամ աշակերտներով շրջում էր դաշտերում և մարգագետիններում: Երեկոյեան նըրանք վերադառնում էին, բերելով իրանց հետ զանազան քարեր, հող, բոյսեր, պտուղներ, որդեր, բզէզներ: Իսկ վատ եղանակին և ձմեռը չորս ժամից աւելի չէր պարապում. մնացած ժամերին կամ ինքն էր աշակերտների համար գրքեր կարդում, կամ նրանց կարդացածը լսում:

«Է՛հ, ասում էի, քննութեանը աշակերտները կտրւելու են»: Բայց այդպէս չեղաւ: Աշակերտ-

ները հրաշալի կարգում և գրում էին, լաւ հաշ-
ւում, կտրուկ և համարձակ պատմում, բայց որ
գլխաւորն է՝ արտաքին աշխարհի մասին շատ
տեղեկութիւններ ունէին: Հասակաւոր աշակերտ-
ներին վարժապետը միանգամայն կախարդել էր:
Հենց որ մթնում էր, բոլորը վազում էին դահ-
լիճ, գրում, հաշւում, իսկ աւելի յաճախ մինչև
ուշ դիշեր կարգում կամ լսում էին ուսուցչի
կարդացածներն ու պատմածները: Ամենքս էլ
կարծես թարմացել էինք: Փոքրերը աւելի կայ-
տաւ և հարցասէր էին դարձել: Ընթերցանու-
թեան գրքերը իրար ձեռքից խլում էին: Հասա-
կաւոր գիւղացիները սկսեցին աւելի հետաքրքրու-
ւել ընկերակցութեան գործերով, աւելի բազ-
մակողմանի դատողութիւններ տալ, ջանասիրու-
թեամբ աշխատել: Բոլորն էլ իրար հետ աւելի
մտերմացել էին և ընկերական կապերով շաղ-
կապւել: Մանր-մունր կռիւներ բոլորովին չէին լի-
նում: Միսակ Սահակեանը մեր կեանքում մըտ-
ցրեց՝ խոհականութիւն, գիտութիւն, բարութիւն
և աշխոյժ: Առանց նրան, ինչ որ հիմա տեսնում
ես, սրա կէսն էլ չէինք անի: Պէտք է խոստովան-
ւել, որ նախկին և հիմիկայ վարժապետները
այնքան են տարբեր միմեանցից, ինչքան արևն
ու լուսինը, մարդն և իր ստւերը: Միսակ Սա-
հակեանը ինքը սիրում էր գիտութիւնը և իր ա-
շակերտների մէջ էլ վառեց այդ գիտութեան
լուսատու ջահը. իսկ առաջին ուսուցիչը աշա-

կերտներին պատրաստում էր միմիայն քննու-
թեան համար:

Միսակ Սահակեանը իսկապէս որ լուսաւո-
րեց թէ մեր և թէ երեսանների մտքերը, իսկ ա-
ռաջին վարժապետը նման էր արհեստաւորի և
այն էլ վատ ու վնասակար արհեստաւորի: Բացի
այդ, բոլորովին հասկացողութիւն և սէր չունէր
դէպի գիւղատնտեսական գիտելիքները. իսկ վեր-
ջինս, ընդհակառակը. գիւղացիք սիրով գրոյցներ
են անում նրա հետ և միշտ իրար լաւ հասկա-
նում: Սա իր կրթութիւնը ստանալուց յետոյ՝
երկու տարի պարապել էր գիւղատնտեսական
դպրոցում և ստանում է «Նոր-Դպրոց», «Գիւ-
ղատնտես»...

XXIX

Հրաւագործ ոյժեր.

— Բայց ասա ինձ, Վահան, ինչպէս կա-
րողացար դու մարդկանց միացնել մի այսպիսի
ընկերակցութեան մէջ:

— Բեզ արդէն յայտնի է,—պատասխանեց
Վահանը, որ երբ ես գաւառում շրջում էի, ինձ
հետ միացան անտուն-անտեղ մարդիկ, այսպէս
կոչւած գիւղերի տականք համարւածները: Մի
կողմից կեանքի դառնութիւնները, միւս կողմից
ապագայի վարդ յոյսերը ստիպեցին այդպիսի-
ներին միանալ մեզ հետ: Այդ յոյսերը մասամբ

իրականացան: Ամեն մի նոր անդամ, մենակութեան փոխարէն գտնուում էր շատ ընկերներ, անգործութեան, պարապութեան փոխարէն նա ունենում էր մշտական աշխատանք, հասարակութեան անվստահութեան փոխարէն նա այժմ ունէր ընկերների և ապա բոլոր մարդկանց վստահութիւնը: Եւ այդ թշուառականները նոր միայն համոզուում էին, որ միութիւնը ոյժ է և բոլոր բարիքների մայրը:

— Բայց եթէ հաւաքենք մի 10—20 անտուն-անտէր թափառականներ և նրանց ասենք այդ, հազիւ թէ նրանք միանան:

— Ի հարկէ չեն միանալ: Ծնշւածները, չքաւորները, արհամարհւածները ընդհանրապէս կասկածով են վերաբերւում ամեն բանի, մանաւանդ՝ քաղցր խօսքերին: Սակայն նրանք շատ շուտ են զգում դէպի իրենց ցոյց տւած ամենաչնչին վստահութիւնը, սէրը և յարգանքը:

Ես նրանց կատարեալ հաւատ էի ընծայում: Նրանք հաւաքւեցին իմ շուրջը, որպէս իրենց հարազատի: Բայց նրանց ընկճւած ոյժերի վերականգանութեան համար հարկաւոր էր՝ որոշ գործ, գիւղացիական կեանք: Նրանք հողի զաւակներ էին և շատ խորը կապւած նրա հետ: Այստեղ օգնութեան հասաւ մեր վերցրած հողամասը: Հենց որ հող, տուն, կենդանիներ ձեռք բերեցինք, կարծես թէ բոլորը վերածնւեցին: Թշուառների մէջ ինչքան որ լաւ յատկութիւններ կային՝ յայտնւեցին, երևան եկան:

Վերջապէս նրանք ազատ շունչ բաշեցին, ոյժ և յարգանք զգացին իրենց մէջ, ելքը գտան: Բոլորը սկսեցին աշխատել: Աշխատում էին թէ իրենց և թէ ուրիշների համար, առանց յոգնելու: Օ՛, եթէ այն ժամանակ դու մեզ տեսնէիր: Մըջիւնների պէս ամբողջ օրը աշխատում էինք դաշտում: Ամեն մէկը իրեն մի հսկայ էր կարծում: Ապա հանդէս եկաւ և դպրոցի կարիքը: Թէպէտ և առաջին վարժապետը բոլոր ուսումը դառնացրեց, բայց երկրորդը քաղցրացրեց. նրա ընթերցանութիւնը, դաշտերում, հանդում արած պատմութիւններն ու պարզաբանութիւնները բոլորի աչքը բացին: Եւ այն բոլորը, ինչոր մինչև այդ խաւարով էր ծածկւած՝ պարզւեց, փայլեց, դարձաւ հասկանալի, սիրելի, հարազատ: Երիտասարդութիւնը աշխոյժ ստացաւ, քաջալերւեցին կեանքից հալածւած և ընկճւած բոլոր ընկերները: Նոյն իսկ մեր ծերունիներն էլ ըսկսեցին սովորել: Նրանք բոլորն էլ գրել-կարդալ սովորեցին և ջանէլներից աւելի սիրով են մասնակցում՝ երեկոյեան և կիրակնօրեայ ընթերցանութիւններին:

Գիտութեան լոյսը նոր եռանդ բերաւ. իսկ եռանդը տասնապատկեց ոյժերը: Բայց մեր ընկերակցութիւնն ամրապնդւեց մեր նոր ուսուցիչ Միսակ Սահակեանի մեզ տւած գիտութեամբ և զարգացումով: Նա նոյն իսկ երազում է, որ մեր անապաստանների Նոր-գիւղը օրինակ կը դառնայ Կովկասում ուրիշ շատ այդպիսի գիւղերի,

որոնց շնորհիւ մեզանում չեն լինի անտուն-ան-
տէր և անհող մարդիկ: Նա, ի միջի այլոց, հա-
րեան գաւառում տեսել է մի մեծ արքունական
հողամաս, որտեղ մտադիր է մի մեծ գիւղ հիմ-
նել մեր Նոր-գիւղի ձևով: Այդ գիւղը նա մտա-
ծում է բնակեցնել սկզբում այստեղի բնակիչ-
ներով, թէպէտև պէտք է ասեմ, որ ա-
զատ հողերը ուս գաղթականներին են տալիս:

Լևոն Արամեանը մի ամբողջ շաբաթ ապրեց
Նոր-գիւղում և տուն վերադարձաւ հիացած նրա
կեանքով ու կարգերով:

Մնաս բարևի ժամանակ նա ասաց.

— Կովկասը երջանիկ կլինէր, եթէ բոլոր
հողագործները ապրէին, աշխատէին և լինէին այն-
պէս, ինչպէս նոր-գիւղացիներն են, և աւելի
երջանիկ կը լինէին, եթէ նրանք իրենց սկզբունք
դրած լինէին իսկական կօօպերացիայի գաղափար-
ները իր ուղիղեան հիմունքներով:

ՎԱՀԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԻՐ ԸՆԿԵՐ ԱՐԱՄԵԱՆԻՆ

Սիրելի եղբայր.

Դուք շտապով հեռացաք, և ես չկարողացայ
իմ սիրտն ամբողջովին բանալ ձեր առաջ:

Մենք շրջապատւած ենք խաւար ամբոխով,
որ ոչ կրթւած է և ոչ գաստիարակւած. այդ
ամբոխը կազմակերպւած չէ, չունի գեմատւօ և

Խուսաւորւած ու գիտութեան պաշարով լաւ գիմ-
ւած ուսուցիչներ և քահանաներ: Մեր ժողո-
վուրդը այդ պատճառով էլ աղքատ է և տգէտ:
Մէկից առաջանում է միւսը:

Մի կողմից անհողութիւնն ու սակաւ-
հողութիւնը, միւս կողմից էլ ծայր տւած գաղ-
թականութիւնը իսպառ թուլացնում, մահաւն
դուռն են հասցնում հայ գիւղացիութեանը: Հողը
ուժասպառ է եղել. գիւղատնտեսական միջոցները
հնացել են, շատ տեղեր ջուրը սակաւ է և կազ-
մակերպւած օգնութիւն ոչ մի տեղից չկայ այդ
բոլորը բարելաւելու համար:

Շատ է գրել հողային ջանքի մասին. հա-
րուստները կարող էին այդ ուղղութեամբ մեծ
գործ կատարել, բայց նրանցից ոչոք գիտակցա-
կան քայլ չի անում: Ժամանակն անցնում է, ժո-
ղովուրդը աղքատանում և բայքայւում է ու թաղ-
ւում աւելի թանձր խաւարի մէջ: Անդրկովկասում
գտնւող 1500 հայ գիւղերից մօտ 400-ը միայն
ունեն ծխական դպրոցներ, որոնց մեծ մասը մի-
ղասեան են: Շնորհիւ ճանապարհների հաղորդակ-
ցութեան վատութեան, լրագրի ու ընթերցարան-
գրադարանների բացակայութեան գրել-կարդալ
սովորածներն էլ իրենց իմացածը մոռանում են:

Մեր հարեան վրացի եղբայրներն իրենց
Հողային Բանկի (Ազնւական) շնորհիւ մեծ յար-
մարութիւն և միջոցներ են ստանում լաւ հիմ-
քերի վրայ դնելու, ինչպէս ընդհանուր կրթու-

Թեան գործը, նոյնպէս և հողային խնդիրը: Բան-
կի տւած օգուտը մեծ է, որից մենք իսպառ-
գուրկ ենք:

Հայ տպագրութեան 400 և տառերի գիւտի
1500 ամեայ յորելեանի յիշատակին հիմնւած է
Դպրոցական ֆոնդ. ժամանակը պահանջում է,
որ հիմնենք և հողային ֆոնդ. և անհրաժեշտ է,
որ այդ իրագործւի հենց այսօր, թէ չէ վաղը
ուշ կը լինի. թող ամենքը լաւ գիտակցեն այդ:

Մեր վանքապատկան հողերի մշակումը կա-
նոնաւորելու խնդիրը մեծ դեր կարող է խաղալ:
Այդ հողերը կառավարող կազմակերպւած առան-
ձին վարչութիւններ չկան, հենց այն պատճառով,
որ ժողովուրդը թոյլ և թերի հասկացողութիւն
ունի հողերի և գիւղատնտեսութեան մասին: Ե-
թէ մենք ունենայինք գիւղատնտեսական կըր-
թութեամբ զինւած երիտասարդութիւն՝ մեր այդ
պակասը լրացած կը լինէր, որովհետեւ հողի սի-
րով լցւած՝ նրանք սրտով կը կաշէին այդ գործին:

Անհրաժեշտ է մեր թեմական և երկդասեան
դպրոցներին կից գիւղատնտեսական դասընթաց-
ներ ունենալ, ինչպէս արդէն մի քանի տեղ
բացւել են. այդ երիտասարդները մեծ դեր կը
խաղան ի միջի այլոց և ապագայ գեմատւօյի
մէջ և կը տարածեն կօօպերացիայի հիմունքնե-
րը: Ահա մի մեծ գործ Հայոց Գիւղատնտեսական
Ընկերութեան համար. նա իր կարող ձայնը պէտք
է բարձրացնէ մեր վանքական կալւածքների մշա-
կութեան գործը կանոնաւոր հիմքերի վրայ դնե-

լու համար: Այդ ընկերութեան հետ և ժողովուր-
դը կարող է եռանդով ձեռնարկել հողային ֆոն-
դի իրականացմանը:

Սիրելի Լեոն. գուցէ երկարացրի նամակս,
բայց պէտք է աւելացնեմ, որ մեր գիւղի համար
մի օրիորդ ընտրեցինք և ուղարկեցինք քաղաք,
որ մանկաբարձական-ֆէլդշերական դասընթաց-
ներում սովորի ու վերադառնայ մեզ մօտ. դի-
մեցինք և Հայոց Գիւղատնտեսական Ընկերու-
թեանը, որ մեզ համար մի գիւղատնտես հրա-
հանգիշ (ինստրուկտոր) ուղարկէ մեր հաշւով:
Արդէն մեր գիւղական բաղնիքը պատրաստ է,
որտեղ լողանալու բաղդը չունեցաք: Մեր քա-
հանան երկու ամսով քաղաք է գնացել լսելու և
ուսումնասիրելու հիւանդին առաջին օգնութիւն
հասցնելու դասընթացները, ինչպէս և ծաղիկ
կտրելը: Արդէն մեր հարեան գիւղերը որոշ հա-
մաձայնութեան են եկել՝ հիմնելու մի փոքրիկ
գիւղական հիւանդանոց՝ 7 մահճակալով, որ կը
նստի 6—7 հազար բուբ.:

Վերջացնում եմ նամակս համոզւած լինե-
լով, որ հողային ֆոնդի գաղափարը կը տարա-
ծես բո քաղաքացի ընկերների շրջանում, որով
մեծ օգնութիւն արած կը լինես քաղաքից բա-
ժանւած մեր խեղճ գիւղացիութեանը: Դուք
տեսաք, թէ ինչպէս մենք քրտինք ենք թափում
և անխոնջ աշխատում, բացէք մեզ և լուսոյ ճա-
նապարհը: Մեր դռները բաց է բոլոր անտուննե-

րի համար: Մի մոռանաք մեզ, գոնէ ամառներն այցելեցէք մեր գաւառները:

Ձեզ սիրող Վահան

Յ. Գ. Մոռացայ նամակիս մէջ իր տեղում չիշել մեր՝ գաւառացիներին իղձը: Մենք կարդալու շատ քիչ բան ունենք, մանաւանդ յետ ենք մնում ընթացիկ կեանքից: Շատ մեծ կարիք է զգացուում մի ժողովրդական, պարզ լեզուով հրատարակող պատկերազարդ հանդէսի, որ իր մէջ պարբերաբար պարունակէր Պետական Դումայում արծարծող հարցերը, ժողովրդին մատչելի դարձնէր կօօպերացիայի, տպագայ զեմստօյի գաղափարները, ցոյց տար նրա անհրաժեշտութիւնն ու ղեկավարող դերը կեանքի մէջ, և առհասարակ այդպիսի մի հանդէսի մէջ ամփոփւէր զիւղատնտեսական, առողջապահական ու քաղաքական բազմատեսակ խնդիրներ:

Մի այսպիսի հանդէս, հարկաւ, պէտք է մատչելի լինի թէ իր գնի և թէ լեզւի կողմից, որ ամեն մի հասարակ ընտանիքի մէջ ևս մուտք գործել կարողանայ:



Նոյն



ՀԻՄՆ. ԱԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂՆԱՆԻ

Հայ ապագրութեան 400 եւ ատերի Գիւտի 1500-ամեայ յօրհանման յիշատակին

- 1) Կորած Սարը և Ոսկէ Կուռքի գանձը 20 կ.
- 2) Փոքրիկ պատմաձքներ 20 կ.
- 3) Գօրիլլա և ուրիշ պատմաձքներ 20 կ.
- 4) Երեք պատմաձք 20 կ.
- 5) Անտառի զաւակները և ուրիշ պատմաձքներ . 20 կ.
- 6) Կրթական ճանապարհորդութիւն 20 կ.
- 7) Պէտք է հետեւի 20 կ.

Մամուլի օակ է՝

Տ) Օրիորդ Ֆրիկետտա.

Զեկն Կարս

Յ. Գ. Այս գիրքը պատրաստ էր տպագրութեան, երբ հայ ժողովրդի հաստատարիմ գաւակ՝ Սիմէոն Զաւարեանի անակնկալ մահւան զոյժը կայծակի արագութեամբ տարածեց ամենուրեք՝ խոր սուգի մէջ համակելով ամեն մի հայի. ուստի ներկայ հրատարակութիւնը նւիրում ենք նրա անմոռանալի յիշատակին:

«Արցունքներն ու ցաւակցութիւնները չեն, որոնցով պիտի գնահատեն ու անմեռ պահեն հատարակական որևէ գործչի յիշատակը, այլ այն գործի շարունակութիւնը, որի կէտ ճանապարհին՝ ընտանի օրէքի համաձայն՝ հանգստանում է մշակ գործիչը»:

Հրատ.

ԳԻՆՆ Լ-20 ԿՊՎ.

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0045421

